2009, Օգոստոս, թիվ 2

ՀԱՎԱՏ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ

# ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ազգային-ազատական կուսակցության շրջաբերական

ՐԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ
էջ 2

ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՍՈՒՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ «ՌԱԴԻՈՀԱՅ»-Ի ԱՌԹԻՎ
էջ 2

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
էջ 2

ԼՈՒՐԵՐ
էջ 3

ՍՏՅՈՊԱ ՍԱՖԱՐՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՆԱՏՕ-Ի ԽՎ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆԱՍՏԱՇՐՋԱՆԻՆ
էջ 3

ԶԱՐՈՒՀԻ ՓՈՍՏԱՆՋՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵԽԽՎ-ՈՒՄ
էջ 4

Ա. ԲԱԽՇՅԱՆԻ ԵՒ Ս.ՍԱՖԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԱԺ ՀՈՒՆԻՍԻ19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ
էջ 5

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ» ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՄԲԻՈՆԻՑ ԱՐՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
էջ 6

ՐԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ՔՎԵԻՍ ՓՈԽԱՐԵՆ
էջ 7

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ
էջ 7

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ» ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Հ1-Ի «ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՇԱԲԱԹ» ՀԱՂՈՐԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
էջ 8

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ» ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
էջ 8

ՐԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ԱՆՁՆԱԿԱՆ՝ ՈՉԻՆՉ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԱՍՆՅԱԿԸ
էջ 9

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ
էջ 10

ԼՈՒՐԵՐ
էջ 10

## ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾԱԾ ՍԵՒ PR. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԿՆԱՐԿԵ՞Լ ԵՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄՐՑԱՊԱՅՔԱՐԸ





Արդեն մեկ ամսից ավելի է, ինչ իշխանածառա լրատվամիջոցները վայրահաչ են սկսել «Ժառանգության» դեմ: Նախ սկսեցին Զարուհի Փոստանջյանին մեղադրել այն բանի համար, որ ԵԽ-ում ստորագրահավաք է կազմակերպել հօգուտ Մարտի 1-ի բացահայտման եւ քաղբանտարկյալների ազատ արձակման, որի տակ իրենց ստորագրություններն են դրել նաեւ ԵԽ մեկական թուրք եւ ադրբեջանցի պատվիրակներ: «Ժառանգությունը» այդ առումով պատասխանեց, որ այսուհետ եւս, երբ Զարուհի Փոստանջյանը հայանպաստ առաջարկներ անի ԵԽ-ում, օրինակ, ԼՂՀ անկախության ճանաչմանն ուղղված, ապա ջանալու է դրանց տակ եւս առավելագույն թվով թուրք եւ ադրբեջանցի պատվիրակների ստորագրություններ կորզել, ինչը մեծ դիվանագիտական նվաճում կլինի: Էլ չենք խոսում այն մասին, որ Արցախի ազատագրված տարածքները Ադրբեջանին ինչ-ինչ անհասկանալի եւ անհստակ պայմանների դեպքում հանձնելու պատրաստակամությունը (ի դեմս Մադրիդյան սկզբունքների) պաշտոնապես հաստատած իշխանություններն ու նրանց խամաճիկները չէ, որ «հայրենասիրական» խրատներ տալու բարոյական իրավունքն ունեն (խնդրո առարկայի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս էջ 4-ում ):

Սակայն սեւ PR-ի առաջին սերիայում տապալվելուց հետո իշխող խմբավորումը հապճեպորեն անցավ երկրորդ սերիային: Օրերս արդեն կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանի դեմ Գալուստ Սահակյանը տարածեց ստեր եւ զրպարտություններ, որոնց տիրաժավորեցին Բաղրամյան 26 հասցեից հրահանգավորվող նույն այդ ԶԼՄ-ները (տես էջ 2), եւ որոնք եւս լիովին մերկացվեցին թե անձամբ Րաֆֆի Հովհաննիսյանի եւ թե «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության կողմից: Հարց է առաջանում. այդ ինչու՞ է այդքան շտապում վարչախումբը. արտահերթ ընտրություննե՞ր են սպասվում: Նախագահակա՞ն, խորհրդարանակա՞ն, թե երկուսն էլ: Չենք զարմանա, եթե այս ենթադրությունն իրականանա, քանի որ արցախյան հարցում իշխանությունների եփած ապուրն այնպիսին է, որ իրենք մի պահ կարող է ստիպված լինեն ընտրություն կատարել մի կողմից այդ ապուրը ստիպողաբար ուտելու (իմա՝ ոչ հայանպաստ փաստաթուղթ ստորագրելու ու ազատագրված տարածքները հանձնելու) եւ մյուս կողմից՝ իրավիճակը փրկելու համար հրաժարական տալու եւ նոր ընտրություններ նշանակելու միջեւ: Իսկ նոր ընտրությունների արդյունքում իրենք երբեք չեն ուզենա կորցնել իշխանությունը, այլ կփորձեն փոխանցել կլանի ներսում գտնվող որեւէ յուրայինի: Րաֆֆի Հովհաննիսյանի եւ Զարուհի Փոստանջյանի դեմ ծառայամիտ լրատվամիջոցներով միանգամից, մեկ համազարկով իրականացված շինծու եւ պատվիրված ջղաձիգ արշավը ընդամենը եւս մեկ անգամ փաստում է այն ճշմարտությունը, որ առաջիկա խորհրդարանական եւ նախագահական ընտրություններում «Ժառանգությունը» մնում է գործող վարչախմբի հիմնական եւ առավել վտանգավոր մրցակիցը: Մնում է, որ «Ժառանգությունն» էլ պատրաստ լինի նման զարգացումների եւ փորձի ընդդիմադիր դաշտի այլ դերակատարների հետ համագործակցաբար վերջապես ապահովել խաղաղ իշխանափոխություն:

## «ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ» ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍՈՒՀԵՏ՝ www.heritage.am ՎԵԲ-ԿԱՅՔՈՒՄ

Հարգելի համաքաղաքացիներ, ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների գործունեության ամսական հաշվետվություններին այսուհետ կարող եք ծանոթանալ կուսակցության www.heritage.am պաշտոնական վեբ-կայքում: «Ժառանգության» պատգամավորների, ինչպեսեւ վարչության, վերստուգիչ եւ կանոնադրական հանձնաժողովների անդամների գործունեության վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները խնդրում ենք ուղարկել gevor@heritage.am էլեկտրոնային հասցեով:

# ՐԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

27 հուլիսի 2009

Գալուստ Սահակյանին
Պատգամավոր, ՀՀԿ խմբակցության ղեկավար
Ազգային ժողով
Երեւան

Տիար Սահակյան,

24 հուլիսին Ձեր մամուլի ասուլիսի ժամանակ արցախյան հիմնահարցում «կոնկրետություն» հայցեցիք քաղաքական ուժերից ու գործիչներից:

Կոնկրետ` Դուք ստախոս զրպարտիչ եք:

Հանրային իմ ծառայության ողջ ընթացքում, այդ թվում 1992թ., ցույց տվեք թեկուզ մի փաստաթուղթ, պարբերություն, նախադասություն կամ գեթ մեկ տող, որտեղ Արցախի ինքնիշխանության, անկախության, ապագաղութացման ու ինքնորոշման իմ ի սկզբանե դավանած հավատո հանգանակին հակառակ ստորագրել եմ կամ քվեարկել: Ձեզ օգնեմ, թեեւ Դուք լավ գիտեք. նման բան գոյություն չունի:

Եթե իմ կամ այլոց պաշտոնավարման ժամանակահատվածում այլ պաշտոնյաներ եղել են, ովքեր նման քայլի դիմել են, բացահայտեք նրանց եւ նրանց հրահանգողներին (ինչպես որ փայլուն կերպով անում եք մարտի 1-ի պարտակված գործում): Բացահայտեք նաեւ, թե Դուք կոնկրետ ինչ էիք անում` քաղաքականորեն եւ անձնական հաշվով, երբ ես որպես արտգործնախարար, ապաեւ շարքային քաղաքացի տեւապես հիմնավորում էի ԼՂՀ ճանաչման հրատապ հրամայականը, եւ կոնկրետ` գործարքի մեջ մտնելով բոլոր ժամանակների իշխանավորների հետ, ահա այսօր ուր եք հասցրել բյուրեղյա մարդկանց այդ քաղաքականությունը, ձեռքի հետ էլ` օգուտներն անհատական: Իսկ Դուք դեռ խոսում եք սկզբունքներից, պատասխանատվությունից:

Ձեր հերթական այս կեղտոտ հերյուրանքը կարող էի արժանացնել նույն այն լռելյայն պատասխանին, որոնց` հարգելով Ձեր տարիքն ու փորձը, արժանացրել եմ Ձեր կատարած նախորդ բոլոր ստահոդ ու կեղծավոր հայտարարությունները: Չուզենալով Ձեզ հասցնել որեւէ անձնական ցավ կամ վիրավորանք, ոչ էլ Ձեզ համեմատել մեզանում զգալի տարածում գտած անամոթաբար ստեր մոգոնող պաշտոնյաների, գործիչների, կուսակցապետերի, հեռուստատերերի, հաղորդավարների, խմբագիրների ու տարատեսակ վարձու գրչակների հետ, պարզապես լռել եմ: Եվ` իզուր:

Դուք արդեն պատկանում եք նույն այդ դասին: Ես Ձեզ եւ Ձեր նմաններից պահանջ չունեմ եւ չեմ էլ կարող ունենալ: Ամոթ եմ զգում Ձեզ համար, եւ նրա համար, որ մեր երկրի «իշխող» կուսակցությունն ու խմբակցությունը ղեկավարման նման որակ է ապահովում: Սրանից դատելով` արդեն տեսանելի են իշխանության գործունեության կեղծ հիմքերը, ինչպեսեւ, ցավոք, պետության իրական վիճակը:

Տերյանին, Սեւակին, Րաֆֆուն, Մեծն Նժդեհին եւ Հայոց արյունը մի խառնեք Ձեր զարտուղի գործերին:

Մնաք բարով, Րաֆֆի Կ. Հովհաննիսյան

# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՏՂԱՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ՞.

## ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՍՈՒՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ «ՌԱԴԻՈՀԱՅ»-Ի ԱՌԹԻՎ

4 օգոստոսի 2009թ., Երեւան: Ս.թ. հուլիսի 24-ին ՀՀԿ փոխնախագահ եւ խորհրդարանական խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը հայտարարեց, թե իբր 1992թ. Րաֆֆի Հովհաննիսյանը ԵԱՀԽ նախարարների կոմիտեի շրջանակներում ստորագրել է «Լեռնային Ղարաբաղ` Ադրբեջանի կազմում» ձեւակերպմամբ փաստաթղթի տակ: Հուլիսի 27-ին Րաֆֆի Հովհաննիսյանը հրապարակավ նրանից պահանջեց ցույց տալ «թեկուզ մի փաստաթուղթ, պարբերություն, նախադասություն կամ գեթ մի տող, որտեղ Արցախի ինքնիշխանության, անկախության, ապագաղութացման» իրավունքին հակառակ ստորագրել կամ քվեարկել է իր հանրային ծառայության ողջ ընթացքում: Հովհաննիսյանը նաեւ պահանջեց բացահայտել իր կամ այլոց պաշտոնավարման ժամանակահատվածում նման քայլի դիմած պաշտոնյաներին ու նրանց հրահանգողներին` եթե այդպիսիք եղել են: Եթե հուլիսի 24-ին Գ.Սահակյանը պնդում էր, թե Ր.Հովհաննիսյանն է ստորագրել ինչ-որ փաստաթղթի տակ, ապա հուլիսի 28-ի նրա «պատասխան» նամակից ակնհայտ դարձավ, որ ԵԱՀԽ Ավագ պաշտոնյաների կոմիտեի` 1992թ. փետրվարի 28-ին ընդունած փաստաթղթին հավանություն է տվել մեկ այլ հայ պաշտոնյա: Իսկ Հովհաննիսյանի հասցեին ինչեցրած իր զրպարտությունը Գ.Սահակյանը փորձեց «հիմնավորել»` թե նա արտգործանախարար է եղել մի իշխանության օրոք, որի «դիրքորոշումն ու կեցվածքը Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելն» էր: Շրջանցելով իր ստերն ու զրպարտությունը մերկացնող «Ժառանգության» ծանրակշիռ հակափաստարկները` Գ.Սահակյանը հուլիսի 31-ին «Ռադիոհայ»-ի «Հայկական անդրադարձ» հաղորդման ժամանակ հրապարակ նետեց նոր սուտ` իբր 1992թ. Րաֆֆի Հովհաննիսյանը դեմ է եղել ԼՂՀ անկախության ճանաչմանը` Հելսինկյան եզրափակիչ ակտի 10 հայտնի սկզբունքները եւ ԵԱՀԽ փաստաթղթերը վավերացնելու պատճառով: ՀՀԿ փոխնախագահի եւ խորհրդարանական խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի հին ու նոր ստախոսության կապակցությամբ «Ժառանգություն» խմբակցությունը հարկ է համարում վերահաստատել հետեւյալը.

Ա) Ր.Հովհաննիսյանի պետական ու հանրային ծառայության արձանագրություններն են վկայում, որ չի եղել դիվանագիտական որեւէ հանդիպում կամ ելույթ, որտեղ նա հիշատակած չլինի ԼՂ ինքնորոշման հիմնարար իրավունքը կամ պահանջած չլինի միջազգային օրենքի հիման վրա ԼՂՀ անկախության ճանաչումը: Եվ չնայած 1992թ. փետրվարի 28-ի ԵԱՀԽ Ավագ պաշտոնյաների կոմիտեի փաստաթուղթը Ր.Հովհաննիսյանի կամքին հակառակ հավանության արժանացավ իշխանական որոշակի շրջանակներից հրահանգավորված հայ պաշտոնյայի կողմից (նույնը եւ Թեհրանի փաստաթուղթը), մինչդեռ տվյալ պահին առկա էր առավելագույնս հայամետ փաստաթուղթ ունենալու հնարավորությունը, ՀՀ առաջին արտգործնախարարին տակավին հաջողվեց 1992թ. մարտի 24-26-ին ԵԱՀԽ Նախարարների կոմիտեում շրջել այդ փաստաթղթի որոշ դրույթների միտվածությունը: Իսկ ԵԱՀԽ նախարարների փաստաթղթում անհետացան հիշյալ փաստաթղթի լեզուն ու տոնայնությունը, սկիզբ դրվեցին խաղաղության գործընթացին, դրանում ԼՂ օրինական ընտրված ներկայացուցիչների ներգրավմանը եւ ընդունվեց ՀՀ-ն ԼՂՀ-ին կապող մարդասիրական միջանցքի հրամայականը: Այս ամբողջը` երկկողմ հանդիպումներում, Գերմանիայի արտգործնախարար Հանս-Դիտրիխ Գենշերի միջնորդած բանակցություններում Ր.Հովհաննիսյանի բոլոր նախաձեռնությունների ու դրսեւորած կարողությունների, ինչպես նաեւ` ԵԱՀԽ-ում նրա ելույթների արդյունքում:

# «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**«Ժառանգություն» կուսակցությունը հունիսի 3-ին ընդունել է հայտարարություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ ընթացող բանակցությունների վերաբերյալ: Ստորեւ ներկայացնում ենք հայտարարության տեքստը:**

**«Ժառանգություն» կուսակցությունը**

- համամիտ է միջնորդների եւ միջազգային կազմակերպությունների այն մոտեցմանը, ըստ որի` Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղիները պետք է գտնեն հենց հակամարտության կողմ հանդիսացող հասարակությունները Լեռնային Ղարաբաղում, Հայաստանում եւ Ադրբեջանում, իսկ մյուս բոլոր պետությունները, որոնք կողմերին օգնում են այդ հարցում, կարող են հանդես գալ միայն միջնորդների դիրքերից եւ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման երաշխավորի դերում.



- անթույլատրելի է համարում որոշ միջնորդների, պետությունների ղեկավարների կողմից խնդրի նկատմամբ հավասարակշիռ մոտեցումը խաթարող եւ խորհրդային Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչմանը վերաբերող հայտարարությունները, որոնք փաստացի քաջալերում են Ադրբեջանին` նախապատրաստվել պատերազմի.
- անվիճելի է համարում, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի էությունը նրա կարգավիճակի միջազգային ճանաչումն է, ինչը բխում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքից` ժողովուրդների ինքնորոշման իրավունքից, եւ որը չի շրջանցվել ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկներում.
- մտահոգված է, որ տարածաշրջանի քաղաքական եւ տնտեսական գործընթացներում ներքաշված գերտերությունների կողմից Ադրբեջանի շահերի բավարարման նկատառումներով Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման բանակցություններում հակամարտության տարածքային բաղադրիչն անհիմն վերածվել է գերակա խնդրի.
- վերստին ուշադրություն է հրավիրում միջազգայնորեն վավերացված այն փաստի վրա, որ Լեռնային Ղարաբաղը դեռեւս 1994թ. ԵԱՀԿ Բուդապեշտի գագաթաժողովում ճանաչվել է հակամարտության ինքնուրույն կողմ, եւ 1998թ.-ից մինչեւ այժմ ընթացող երկկողմ հանդիպումներն ու «զրույցները» չեն կարող բանակցություններ համարվել նույն բուդապեշտյան գագաթաժողովի փաստաթղթերի համաձայն, քանի դեռ դրանց ուղղակիորեն չի մասնակցում ԼՂՀ-ն` իբրեւ հակամարտության անմիջական կողմ.
- հիշեցնում է, որ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ տարածքային սահմանազատման հիմնախնդրով իրավասու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինական ընտրված ղեկավարությունը, եւ Հայաստանը ընդամենը կարող է օժանդակել ԼՂՀ-ի ու Ադրբեջանի միջեւ ծագած այս հարցի կարգավորմանը:

Հակամարտ իրավիճակի վերջնական կարգավորման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, ռազմական գործողությունների վերսկսման վտանգը կանխելու, ինչպես նաեւ հակամարտության կողմերին որեւէ լուծում պարտադրելն ու նրանց ներքին գործերին որեւէ կողմնակի միջամտությունը բացառելու ակնկալիքով «Ժառանգություն» կուսակցությունը հայտարարում է.

1. ԼՂՀ անվտանգության երաշխավորի պարտավորության ստանձնման շրջանակում հայաստանյան կողմը պետք է բանակցությունների ձեւաչափն ու բովանդակությունը համապատասխանեցնի արցախահայության կամքին: Հայաստանը պետք է ճանաչի ԼՂՀ օրինական իշխանության բացառիկ իրավունքներն ու պատասխանատվությունը, իսկ Ադրբեջանի հետ իր բանակցություններում առաջնային դիտարկի ԼՂՀ անկախ կարգավիճակի եւ անվտանգության խնդիրը:
2. Հակամարտության կարգավորման ու ռազմական գործողությունների վերսկսման վտանգի կանխարգելման առումով ամենաարդյունավետ քայլն ենք համարում Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում պետական, քաղաքական ու հասարակական շրջանակներին` միջնորդներին ու միջազգային կազմակերպություններին ուղղված` ԼՂՀ անկախությունը ճանաչելու կոչը եւ միջազգային հանրության կողմից այդպիսի ճանաչումը: Ընդ որում, այդ ուղղությամբ առաջին քայլը պետք է լինի ԼՂՀ անկախության ճանաչումը Հայաստանի կողմից` իբրեւ միջազգային հանրության անդամ, եւ նրա կողմից միջազգային ասպարեզում այդ ուղղությամբ ջանադիր աշխատանքի նախաձեռնումը:

«Ժառանգություն» կուսակցությունը Հայաստանի բոլոր քաղաքական ուժերին, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությանը կոչ է անում միանալ այս նախաձեռնությանը` վստահ լինելով, որ առաջարկված քայլերը բխում են քաղաքական-հասարակական շրջանակների հռչակած նպատակներից եւ անհրաժեշտ պայման են հայ ժողովրդի օրինական իրավունքների արժանի պաշտպանության համար:

*«Ժառանգություն» կուսակցություն*
*3 հունիսի 2009թ.*

*Սկիզբը՝ էջ 7*

Բ) Րաֆֆի Հովհաննիսյանը ԼՂՀ անկախության ջատագովն է ի սկզբանե, ինչի մասին վկայում է կցված՝ «ԼՂՀ անկախությունը ճանաչելու 5 հիմնական պատճառները» փաստաթուղթը, որի անգլերեն բնօրինակը միջազգային հանրության եւ կազմակերպությունների համար 1992թ. օգոստոսին պատրաստեց (հայերենն ավելի ուշ) նրա ղեկավարած ԱԳՆ-ը եւ տարածեց Հովհաննիսյանի պաշտոնավարման ողջ ընթացքում (2008թ. ապրիլին այն բաժանվեց նաեւ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովում, երբ քննարկվում էր «ԼՂՀ անկախությունը ճանաչելու մասին» Ր.Հովհաննիսյանի հեղինակած օրենքի նախագիծը): Այդ անփոփոխ դիրքորոշման վկան է նաեւ ԼՂՀ-ն ճանաչելու վերաբերյալ ՀՀ Գերագույն խորհրդի 1992թ. հուլիսյան նիստերի ժամանակ ճանաչման անհրաժեշտությանը նվիրված՝ ՀՀ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի ելույթը, որից որակապես փոխվեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի մասին» ԳԽ հուլիսի 8-ի որոշումը: 1992թ. ԼՂՀ ճանաչման շուրջ իշխանության եւ ընդդիմության միջեւ հակամարտության հանգուցալուծմանը մեծապես նպաստեց ընդդիմությանն ուղղված Րաֆֆի Հովհաննիսյանի հորդորը՝ ԼՂՀ ճանաչման ժամանակացույցը թողնել ՀՀ նախագահի հայեցողությանը: Հիշյալ որոշման ու իր ելույթի պատճառով Ր.Հովհաննիսյանն արժանացավ իշխանական որոշ շրջանակների քննադատությանը՝ ընդդիմության օգտին խնդրի լուծմանը նպաստելու համար: Թվարկված բոլոր պատճառներով նախագահական իշխանության հետ հակադրության մեջ հայտնվելու արդյունքում, ինչպես նաեւ՝ վերջնականապես համոզվելով, որ ղարաբաղյան խնդրի կարգավորմանն ուղղված ԵԱՀԽ խաղաղ կարգավորման կոնֆերանսի հիմքերն այլ հունի մեջ են դրվում՝ 1992թ. հոկտեմբերի 16-ին Րաֆֆի Հովհաննիսյանը ինքնահրաժարականի դիմում ներկայացրեց:

Գ) ԵԱՀԿ/ԵԱՀԽ Հելսինկյան եզրափակիչ ակտի 10 սկզբունքների՝ իբրեւ միջազգային քաղաքականության խաղի համահավասար կանոնների, եւ դրանցից մասնավորապես տարածքային ամբողջականության սկզբունքի ընդունումը գոնե Ր.Հովհաննիսյանի պաշտոնավարման ընթացքում չի նույնացվել կոնկրետ երկրի, առավել եւս՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման հետ: Ավելին՝ բազմաթիվ երկրների հետ ստորագրված երկկողմ պայմանագրերում ԼՂ հակամարտությանը վերաբերող կետերի ներքո բազմիցս ամրագրվել է «առանց կանխորոշելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը» ձեւակերպումը, իսկ «Ադրբեջանի տարածքային ամբողջականության» կապակցությամբ մշտապես արվել են մեկնաբանող հայտարարություններ դրա ընկալման շրջանակների մասին (առանց Լեռնային Ղարաբաղի, Շահումյանի շրջանի եւ ազատագրված տարածքների): Նրա պաշտոնաթողությունից հետո էր, որ 1996թ. «Լիսաբոնյան սկզբունքների» հիման վրա մշակվեցին 1997թ. «փաթեթային» եւ «փուլային», ապա՝ 1998թ. «Ընդհանուր պետություն» տարբերակները, «Փարիզյան+Քիվեսթյան սկզբունքների» հիման վրա՝ 2001թ. «Մեղրի-Լաչին տարածքային փոխանակության» տարբերակը՝ եւ «Մադրիդյան սկզբունքների» հիման վրա՝ 2007թ. «Հետաձգված հանրաքվե/պլեբիսցիտի» տարբերակը: «Ադրբեջանի տարածքային ամբողջականության» ճանաչման ելակետով նշված բոլոր տարբերակների շրջաբերման ժամանակ իշխանության քաղաքական հենարաններից է եղել նաեւ ՀՀԿ-ն, որին 2007թ. անդամակցեց Սերժ Սարգսյանը:

«Ռադիոհայ»-ի «Հայկական անդրադարձ» հաղորդման ժամանակ այս բոլոր փաստերի անտեսումը, 1991-92թթ. ու այդ շրջանի փաստերի կապակցությամբ հայազգի վերլուծաբանի տնաբույծ մեկնաբանություններն ու մեզ համար անակնկալ՝ ռադիոհաղորդավարի թափանցիկ ակնարկներն ու խեղաթյուրված եզրահանգումները նպաստեցին Գալուստ Սահակյանի հերթական ստախոսության զարգացմանը: Հուսով ենք, որ հիշյալ հաղորդման խմբագրակազմը եւ ՀՀԿ փոխնախագահի այս ու մյուս զրպարտությունները տարածած լրատվամիջոցները սույնը կընթերցեն իրենց առաջիկա թողարկումներում՝ իբրեւ ՀՀ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի պաշտոնավարման շրջանի՝ 1991-92թթ. վերաբերյալ հնչած ստահոդ հայտարարությունների անհերքելի հակափաստարկ:

Ակնհայտորեն՝ Գալուստ Սահակյանը ոչ միայն տեղյակ չէ 1991-92թթ. անցուդարձից, այլեւ ի զորու չէ հասկանալ իր ստերի դեմ բերված փաստական հիմնավորումները: Այլեւս իրեն որեւէ կերպ օգնել չենք կարող եւ ակնակալում ենք, որ ՀՀԿ տեղեկացված նրա կուսակցական ընկերները կկարողանան բացատրել, որ թեմայի արծարծման շարունակումը բացառապես խայտառակում է կուսակցությանը: Հատկապես՝ երբ նա իր ստերը հիմնավորելու նպատակով ժամանակ առ ժամանակ հիշատակում է երջանկահիշատակ Աշոտ Նավասարդյանի անունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցը վերաբերում է Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ 1991-92թթ. պետական երբեմնի դիրքորոշումը կուսակցական ու պետական բարձրաստիճան պաշտոնյայի կողմից միտումնավոր ու շարունակաբար կեղծելուն՝ Հանրապետական նախագահ Սերժ Սարգսյանը ներողություն խնդրելու տղամարդկություն կունենա՞ Գալուստ Սահակյանի հերթական սուտասանության եւ «Ռադիոհայ»-ի առթիվ:

*«Ժառանգություն» ընդդիմադիր խորհրդարանական խմբակցություն*

# ՀԱՄԱՌՈՏ

## ԱՆԱՀԻՏ ԲԱԽՇՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆՆԵՐ՝ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ ԼՈՒՍԱԲԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

15 հուլիսի 2009թ.: Սույն թվականի հուլիսի 10-ին ԱԺ-ն վերջապես ընդունեց «Հանրակրթության մասին» օրենքը, որի նախագծի քննարկումը տեւեց 4 տարի: Այս օրենքով սահմանվում են հանրակրթության ժողովրդավար խորհուրդներով կառավարման, դպրոցների տնօրենների թեկնածուների կառավարման իրավունքի՝ հավաստագրի ձեռքբերման, ուսուցիչների ատեստավորման, ուսուցչի թափուր տեղերի համար հայտարարվող մրցույթի եւ այլ կարեւոր սկզբունքներ: Այս օրենքը լուսաբանելու, մեկնաբանելու նպատակով ԱԺ կրթության, գիտության, սպորտի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Հանրակրթության մասին» օրենքի նախագծի քննարկման համար ստեղծված ենթահանձնաժողովի նախագահ Անահիտ Բախշյանը նախատեսել է այցելություններ բոլոր մարզկենտրոններ եւ արդեն հուլիսի 12-ին հանդիպել է Արարատի, հուլիսի 17-ին՝ Արագածոտնի մարզի եւ հուլիսի 21-ին Գյումրիի դպրոցների տնօրենների հետ:

Հանդիպումների ընթացքում Անահիտ Բախշյանը ներկայացրեց օրենքը եւ դրա հիմնասյունային գաղափարներն ու սկզբունքները, ինչպես նաեւ բարեփոխումների առանցքը կազմող իրավական կարգավորումները: Մասնավորապես, ներկայացվեցին դպրոցների տնօրենների ընտրության նոր կարգը, դպրոցներում կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների դերի բարձրացումը, լիազորությունները, կազմը, դպրոցներում արդյունավետ ինքնակառավարման ստեղծումը, ինչպես նաեւ մի շարք այլ հարցեր:

Տեղի ունեցած քննարկումների ընթացքում ներկաները պատգամավորին փոխանցեցին օրենքի եւ դրա արդյունավետ կիրառման մասին իրենց գաղափարները:

Անահիտ Բախշյանը նաեւ առիթ ունեցավ ծանոթանալ մարզի դպրոցների տարբեր խնդիրներին, որոնց առնչությամբ պատգամավորը պատրաստվում է դիմել համապատասխան պետական մարմիններին:

## «ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ» ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԶԵՐ

Օգոստոս 2009թ.: Ի կատարումն «Ժառանգություն» կուսակցության վարչության որոշման՝ կուսակցության վարչության եւ պատգամավորական խմբակցության անդամները մեկնարկեցին ամենամսյա այցելությունները մարզեր՝ կուսակցության տարածքային ստորաբաժանումների, ինչպեսեւ բնակչության լայն խավերի հետ հանդիպելու, մարզերում առկա խնդիրներին առավել մոտիկից ծանոթանալու նպատակով:

Զարուհի Փոստանջյանն ու Վարդան Խաչատրյանը այցելեցին Արթիկ, Գյումրի, Բերդ, իսկ Ստյոպա Սաֆարյանն ու Զոյա Թադեւոսյանը՝ Մարտունի, Վարդենիս, Գավառ: Հանդիպումների վերաբերյալ հաշվետվությունները կտեղադրվեն կուսակցության www.heritage.am վեբ-կայքում:

## ՍՏՅՈՊԱ ՍԱՖԱՐՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՆԱՏՕ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆԱՍՏԱՇՐՋԱՆԻՆ

### Ադրբեջանական հերթական զրպարտությունն ու դեմարշը Օսլոյում



«Ժառանգություն» խմբակցության անդամ Ստյոպա Սաֆարյանը, ով վերջերս ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակության կազմում փոխարինեց Րաֆֆի Հովհաննիսյանին, ԱԺ աշխատակազմի արտաքին հարաբերությունների վարչության աշխատակից եւ պատվիրակության քարտուղար Իզաբելա Ղազարյանի հետ մայիսի 23-26-ը Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում մասնակցեց Վեհաժողովի գարնանային նստաշրջանի աշխատանքներին: Վեհաժողովի աշխատանքներին ներկա էր նաեւ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան Սամվել Մկրտչյանը:

ԱԺ պատգամավորը մայիսի 23-ին մասնակցեց Պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նիստին, որտեղ քննարկվում էին անվտանգության խնդիրների վերաբերյալ Նորվեգիայի մոտեցումներն ու պատկերացումները, ինչպես նաեւ Աֆղանստանի իրավիճակին, Սիբեր-պաշտպանությանը, ռազմական հակամարտություններում ու հետկոնֆլիկտային իրավիճակներում կանանց եւ աղջիկներին ուղղված սպառնալիքներին, խմբային (կլաստերային) մատակարարմանը, Օսլոյի գործընթացի ազդեցությանն ու հետեւանքներին, տարածքային պաշտպանությանն ու ռազմական զսպման կարիքներին առնչվող զեկույցներն ու խնդիրները: Ստյոպա Սաֆարյանը մեկնաբանություններով ու հարցադրումներով հանդես եկավ մասնավորապես Աֆղանստանին, ապաեւ՝ ռազմական հակամարտություններում եւ հետկոնֆլիկտային իրավիճակներում կանանց եւ աղջիկներին ուղղված սպառնալիքներին նվիրված քննարկումների ժամանակ: Վեհաժողովում Ադրբեջանի ասոցացված պատվիրակության անդամ Մալահաթ Իբրահիմկըզին հակամարտության գոտիներում կանանց եւ աղջիկների բռնաբարման հարցերից «սահուն» անցում կատարեց ղարաբաղյան հակամարտությանը եւ Հայաստանին զրպարտող հայտարարություններ արեց՝ իբր Հայաստանի ագրեսիայի, Ադրբեջանի տարածքների 20 տոկոսի բռնազավթման եւ 1 միլիոն ադրբեջանցի փախստականների վերաբերյալ: Քննարկման թեմայի առնչությամբ իր մեկնաբանությունները ներկայացնելուց առաջ Ստյոպա Սաֆարյանը մասնավորապես նշեց. «Խորապես ցավում եմ, որ իմ խոսքը պետք է սկսեմ ադրբեջանցի իմ հարգարժան գործընկերոջ զրպարտություններին պատասխանելով: Ես միանգամայն այլ ելույթ էի պատրաստվում ունենալ, սակայն հարկադրված եմ խոսքս դրանից սկսել: Ես հասկանում եմ, որ իմ ադրբեջանցի գործընկերներն իրենց բարձրագույն ղեկավարությունից իջեցված առաջադրանք ունեն՝ օգտագործել ցանկացած ֆորում եւ հնարավորություն՝ Հայաստանին զրպարտելու, իրականությունը խեղաթյուրելու համար: Տիկնայք եւ պարոնայք, մենք կարող ենք պատմական փաստերն ու պատմությունը տարբեր կերպ մեկնաբանել, սակայն հնարավոր չէ կեղծել փաստերն ու նոր պատմություն գրել: Ես կհամաձայնեմ իմ գործընկերոջ մի բնորոշման հետ, սակայն խմբագրական որոշակի փոփոխությամբ. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը բռնազավթման ու ագրեսիայի տապալված փորձի ողբերգական պատմություն է. ավելի ստույգ՝ ընդդեմ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական նախահարձակ ագրեսիայի ու բռնազավթման տապալված փորձի, երբ Ադրբեջանը որոշեց ռազմական ճանապարհով գրավել այն, որը կանխվեց հայկական արդյունավետ պաշտպանությամբ: Եվ այսօր ադրբեջանցի իմ գործընկերը փորձում է խեղաթյուրել այդ փաստը, որը ողբերգական հետեւանքների ու ներկայիս իրողություններին հանգեցրեց: Անհնար է պատմության վերաշարադրումը, ինչը փորձում է նա անել»: Այնուհետեւ Ս.Սաֆարյանը արծարծեց ռազմականացված տարբեր հակամարտություններում կանանց ներգրավվածությանն ու զինաթափմանը վերաբերող հարցը եւ մարտահրավերները: Նրա ելույթից հետո ադրբեջանցի պատգամավորն անմիջապես նյարդայնացած ու ցուցադրաբար՝ խանգարելով նիստի ընթացքը, գոռգոռալով լքեց նիստերի դահլիճը:

## ԵԽԽՎ-ՈՒՄ ԶԱՐՈՒՀՈՒ 3 ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ՈՐՈՇ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

ԵԽԽՎ «Ժողովրդավարական հաստատությունների գործունեությունը Հայաստանում» վերտառությամբ հերթական բանաձեւի նախագծում ներառելու համար Զարուհի Փոստանջյանը արել էր երեք առաջարկ: Դրանք են. «1. Նախագծի 5.2 կետին ավելացնել հետեւյալ նախադասությունը. «Կոչ է անում Հայաստանի իշխանություններին օգտագործել առկա բոլոր իրավական գործիքները` այդ մարդկանց ազատ արձակելու համար», 2. Նախագծի 7.1 կետում ավելացնել. «Վեհաժողովը Հայաստանի իշխանություններին կոչ է անում վերակազմավորել փորձագետների փաստահավաք խումբը եւ թույլ տալ խմբում ներգրավել անկախ միջազգային փորձագետներ», 3. Նախագծի 15 կետում ավելացնել. «Պահանջել համազեկուցողներից, որ նրանք Հայաստան այցելեն մինչեւ ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանը` սույն բանաձեւի պահանջների հետ Հայաստանի պարտավորությունների կատարման համապատասխանության վերաբերյալ զեկույց պատրաստելու նպատակով»:

Ահա թե ինչպես են մեկնաբանել դրանք «ժառանգության» պատգամավորները: Լարիսա Ալավերդյան. «Ես հարցնում եմ. ո՞վ է այն մարդը, որ այս երեք առաջարկների տակ չի ստորագրի: Պարզապես գոյություն ունի ընթացակարգ, որ այս նախաձեռնության տակ կարող է ստորագրել ԵԽԽՎ-ում ներկայացված ցանկացած պատգամավոր»: Լարիսա Ալավերդյանը նաեւ նշել է, որ թուրք եւ ադրբեջանցի պատգամավորները, մտածել են, թե ստորագրելով այդ նախաձեռնության տակ կարող են վնասել Հայաստանին: «Թո՛ղ ամաչեն ԵԽԽՎ-ում Հայաստանը ներկայացնող այն պատգամավորները, ովքեր չեն միացել Զարուհի Փոստանջյանի նախաձեռնությանը», - հավելեց նա:

Իրապես, այն, որ գոնե ադրբեջանցի պատգամավորը Զարուհու հայանպաստ առաջարկների տակ ստորագրել է առանց խորանալու դրա բովանդակության մեջ եւ խորհրդակցելու իր երկրի այլ պատվիրակների հետ` եւս մեկ անգամ ապացուցեց ԵԽ-ում ադրբեջանական պատվիրակության ղեկավար Սամադ Սեիդովը, որը լուրի տարածումից անմիջապես հետո շտապեց հերքել այն` պնդելով, թե նման բան չի եղել, որ Գյուլթեքին Հաջիբեյլին որեւէ նման առաջարկի տակ չի ստորագրել: Իսկապես, դժվար է պատկերացնել, թե կստորագե՞ր արդյոք Հաջիբեյլին մի փաստաթղթի ներքո, որով կոչ է արվում ազատ արձակել արցախյան հերոսամարտի` քաղբանտարկյալ դարձած ազատամարտիկներին: Այն էլ` հունիսի 24-ին ԵԽԽՎ ամբիոնից Զարուհու հնչեցրած ելույթից հետո, որում նա մերկացնում էր Ադրբեջանին` հայերի հանդեպ իրագործված էթնիկ զտումների համար:

Զարուհի Փոստանջյանի քայլը դրական են գնահատել եւ այդ կապակցությամբ արտահայտվել ԶԼՄ-ներով նաեւ կուսակցության վարչության նախագահ Անահիտ Բախշյանը, խմբակցության ղեկավար Արմեն Մարտիրոսյանը եւ պատգամավոր Ստեփան Սաֆարյանը: Վերջինս, Զարուհի Փոստանջյանի եւ մամլո խոսնակ Հովսեփ Խուրշուդյանի հետ համատեղ տրված մամլո ասուլիսի ընթացքում, մասնավորապես, հայտարարել է, որ այս աղմուկի իրական պատճառը ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանի փորձն էր` քողարկել իշխանությունների կողմից իրեն հանձնարարված պատվերի ձախողումը, այն է` հանել Հայաստանը ԵԽ մոնիտորինգի տակից եւ բացառել «Ա1+»-ի խնդրի արծարծումը Հայաստանին վերաբերող բանաձեւում:

# ԶԱՐՈՒՀԻ ՓՈՍՏԱՆՋՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵԽԽՎ-ՈՒՄ

## ՀԱՅԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

### ԶԱՐՈՒՀԻ ՓՈՍՏԱՆՋՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԵԽԽՎ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ՆԻՍՏՈՒՄ

Հարգելի գործընկերներ,

Մի քանի օր առաջ` հունիսի 20-ին, աշխարհը միաձայնաբար նշեց ՄԱԿ-ի կողմից հռչակված «Փախստականի միջազգային օրը»: Այդ ոգով ես կուզենայի մեկնաբանել այն տխուր իրականությունը, որ այսօր 2.5 միլիոնից ավելի եվրոպացի Եվրոպայի խորհրդի 47 երկրներից 11-ում շարունակում են կտրված մնալ իրենց տներից եւ ունեցվածքից:

Այս ներքին տեղահանվածները (ՆՏ) հակամարտությունների ամենատխուր զոհերն են, ովքեր կարիք ունեն առավել մեծ ուշադրության, օգնության եւ ջանքերի` իրենց հասարակություններում ինտեգրվելու եւ իրավունքները պաշտպանելու:

Ներքին տեղահանվածների հարցը եւ իրենց իրավունքների ու ազատությունների ապահովման հրամայականը մի բան է, ինչն առավել մոտիկ է սրտիս, քանի որ Ադրբեջանի հայկական փոքրամասնությունը Սովետական Միության փլուզման առաջին օրերին նույնպես խոցելի էր բռնի տեղահանման, խտրականության եւ վշտի հանդեպ:

Ավելի կոնկրետ, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի հայերը ենթարկվեցին ոչ միայն հարձակման եւ պատերազմի միջով անցան, այլև էթնիկ զտման ողբալի հանցագործության զոհ դարձան մասնավորապես Ադրբեջանի Բաքու, Կիրովաբադ եւ Սումգայիթ քաղաքներում: Բայց ի տարբերություն մեր հարեւանների` Հայաստանը արել է կարևոր քայլեր եւ հասել կարևոր առաջընթացի ներքին տեղահանվածների ինտեգրման ու իրենց նոր կյանքի կառուցմանն աջակցելուն:

Հայաստանում այսպիսի աշխատանքը կենտրոնացված է հիմնականում խեղումների վերացման, պատերազմի հետեւանքով առաջացած վախի հաղթահարման ու կոնֆլիկտի լուծման ուղղությամբ եւ փնտրում է աղքատության ու մեկուսացման վերացմանն ուղղված քայլեր: Մենք դեռ շատ բան ունենք անելու, բայց մենք կարող ենք առաջնորդել եւ սովորեցնել մեր հարևաններին եւս անելու ավելին` իրենց ներքին տեղահանվածների համայնքին օգնելու հարցում:

Այսպիսով, ներքին տեղահանվածների հարցը համամարդկային խնդիր է, որը չի ճանաչում սահմաններ եւ, ինչպես մարդու իրավունքների հարցը, պետք է հարգված ու պաշտպանված լինի բոլոր ազգերի համար:

Շնորհակալություն ուշադրության համար:



## ԵՎՐՈՊԱՆ` ԼԱՅՆ ՓԱԿՎԱԾ ԱՉՔԵՐՈՎ.

### ԶԱՐՈՒՀԻ ՓՈՍՏԱՆՋՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԵԽԽՎ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՆԻՍՏՈՒՄ

Հարգելի գործընկերներ, այսօր կխոսեմ այս դահլիճում ընդունված` Հայաստանին վերաբերող բանաձեւերի եւ դրանց չկիրառման հետեւանքների, մասնավորապես` երկրիս իշխանությունների կողմից սեփական անպատժելիության գիտակցման ամրապնդման ցավալի իրողության մասին: ԵԽԽՎ` 2008թ. ապրիլի 17-ին ընդունված թիվ 1609 բանաձեւի կարեւոր մեջբերումն է. «Վեհաժողովը համարում է, որ ճգնաժամի հիմնարար եւ խորքային պատճառը պետության առանցքային ինստիտուտների անկարողությունն է` իրենց գործառույթները կատարելիս լիովին պահպանելու ժողովրդավարական չափանիշները եւ իրավունքի գերակայության ու մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները»:

Ցանկացած պետության կարեւոր ինստիտուտներից մեկը դատական համակարգն է, բայց երբ այն ամբողջովին ենթակա է գործադիրին եւ անկարող է բավարար անկախություն ցուցաբերել` քաղաքացիներին հնարավորություն չի տրվում որեւէ կերպ վերականգնելու իրենց խախտված իրավունքները, ավելին` նրանք խոցելի են դառնում իշխանության յուրաքանչյուր չարաշահմանը, ինչն իր հերթին նպաստում է անպատժելիության արմատացմանը: Ես համամիտ եմ, որ պայքարն ընդդեմ անպատժելիության` Եվրոպայի խորհուրդը համարում է որպես առաջնային` մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, բայց համաձայն չեմ, որ նույն Եվրոպայի խորհուրդը հետամուտ է իր կողմից ընդունված բանաձեւերի ամբողջական կենսագործմանը, ինչի արդյունքում էլ ԵԽ անդամ երկրների իշխանությունների շրջանում կամրապնդվի հարազատ ժողովրդի հանդեպ ցանկացած ոտնձգություն կատարելիս անպատժելի մնալու մտայնությունը: Հայաստանի իշխանությունները, որոնք պարտավոր են քննել 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի ժամանակ 10 զոհերի սպանության հանգամանքները, որոնցից առնվազն երեքը, պաշտոնապես հայտարարված է, որ զոհվել են ոստիկանության կողմից կիրառված զենքից, ինչպես նաեւ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից` ձերբակալման պահին, ոստիկանատներում, բանտախցերում քաղաքացիների խոշտանգման բազմաքանակ անվիճելի դեպքերի կապակցությամբ անգամ գեթ մեկ քրեական գործ չեն հարուցել, այդ կերպ չկատարելով իրենց պարտականությունները` Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների համատեքստում: Ավելին` նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, խախտելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածը, 2008թ. մարտի 1-ից քսանօրյա ժամկետով հայտարարել էր արտակարգ դրություն եւ խախտելով ՀՀ Սահմանադրությունը` օգտագործել էր ՀՀ զինված ուժերը: Ցավոք, Վեհաժողովը որեւէ գործուն ու սթափեցնող գնահատական ցայսօր չի տվել ՀՀ նախկին ու ներկա իշխանություններին: Հարգելի գործընկերներ, Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված` մեր երկրին վերաբերող 1609, 1620 եւ 1643 բանաձեւերի չկատարումը ՀՀ իշխանությունների կողմից` վերջիններիս մոտ ավելի է ամրապնդում անպատժելիության գիտակցումը: Բայց չէ՞ որ դեռեւս բացահայտված չեն Հայաստանում 2008 թվականի մարտի 1-ի զոհերի սպանության հանգամանքները, իսկ քաղբանտարկյալները մինչ օրս գտնվում են բանտախցերում: Ավարտելով` իմ գործընկերներին ես կարող եմ միայն հիշեցնել, որ փակելով աչքերը այսպիսի անպատժելիության հանդեպ եւ թույլ տալով հայաստանյան իշխանություններին խուսափել եւ անտեսել իր պարտականությունները եւ պարտավորվածությունները, մասնավորապես այս երեք բանաձեւերի վերաբերյալ, դուք ոչ միայն նպաստում եք Հայաստանում մարդու իրավունքների հետագա խախտումներին, այլ նաեւ թուլացնում եւ խաթարում եք Եվրոպայի խորհրդի` որպես ժողովրդավարական եւ արդար ինստիտուտի հեղինակությունը: Անպատժելիության այսպիսի անամոթ ցուցաբերման նկատմամբ անտեղի հանդուրժողականությունը կարող է միայն խթանել նաեւ ԵԽ անդամ բոլոր երկրներում «մարտի 1»-երի առաջացման հնարավորությունը:

Շնորհակալություն ուշադրության համար:

# «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՆԱՀԻՏ ԲԱԽՇՅԱՆԻ ԵՎ ՍՏՅՈՊԱ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԱԺ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ

**Հունիսի 19-ին Ազգային ժողովը արտահերթ նիստում քննարկեց համաներում հայտարարելու վերաբերյալ նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկը: Ստորեւ ներկայացնում ենք «ժառանգություն» խմբակցության անդամներ Անահիտ Բախշյանի եւ Ստյոպա Սաֆարյանի ելույթները նիստում:**



### Անահիտ Բախշյան

Իհարկե, համաներումը ողջունելի եւ նախագահի հեղինակությունը բարձրացնող մարդասիրական քայլ է: Հատկապես, եթե այն միտված է հասարակության մեջ առկա լարվածությունն իսկապես թուլացնելուն: Մեր հասարակության մեջ համաներումը պիտի նպաստեր իրավապահ եւ արդարության պահանջմունքի բավարարմանը, իշխանությունների նկատմամբ վստահության պակասի կրճատմանը, արդարադատության մարմինների առավել զգոն ու արդարամիտ դառնալուն:

Սակայն համաներման գործընթացին նախորդող դատավարություններն ամրապնդեցին մեր հեղինակազրկված դատարանների, բավականին խոշոր աշխատավարձ ստացող, սակայն այդպես էլ ծառայամտությունը չթոթափած դատավորների ու պատվեր կատարող դատախազների նկատմամբ հասարակության մեջ արմատավորված անսահմանության հասնող բացասական կարծիքը:

Օրինակ՝ պետական մեղադրող Կորյուն Փիլոյանը 9 տարի պահանջեց Սասուն Միքայելյանի համար: Եթե Սասուն Միքայելյանի՝ հայրենիքին մատուցած ծառայությունների մասին հիշեցնելու կարիք չկա, ապա ուզում եմ հիշեցնել Կորյուն Փիլոյանի մատուցած «ծառայությունները» Հոկտեմբերի 27-ի դատավարության ժամանակ: Այդ դատավարությանը, որպես պետական մեղադրող, նա սկսեց մասնակցել բավականին ուշ, որից հետո ամբողջովին շեղվեց դատավարության ընթացքը, եւ նա՝ առաջնորդվելով միայն իր անձին հայտնի շահերով, նպաստեց դրան:

Արդյունքում մոտավորապես 3 տարի տեւած դատավարությունից հետո հասարակությունը ոչինչ ավելի չիմացավ, քան գիտեր արդեն 3 տարի առաջ հոկտեմբերի 28-ին: Այդպես էլ չբացահայտվեցին սահմռկեցուցիչ պետական ահաբեկչության կազմակերպիչները, մեր պետությունը գլխատողները, եւ ահաբեկչությունը մեզանում «բնավորվեց» այնքան հիմնավոր, որ այն սպառնում է բոլորին:

Օրինակ՝ Արաբկիրի թաղապետի որդու կատարած մահափորձը պետեկամուտների կոմիտեի նախագահի նկատմամբ: Ահաբեկչություն, որից ոչ մեկը, ցավոք սրտի, ապահովագրված չէ, եւ որը հետեւանք է այն փաստի, որ մեր երկրում չեն կայանում օրենքի գերակայությունը, արդարադատությունը:

**Խոսքս ուղղում եմ Հանրապետության նախագահին:**

Պարոն Նախագահ,

Համաձայն ՀՀ սահմանադրության՝ Դուք համարվում եք պետության գլուխն ու օրենսդիրը, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեության երաշխավորը: Կարծում եմ՝ Սահմանադրությունը նկատի ունեիք, երբ ընտրություններից հետո Դուք մի առիթով նաեւ խոստացաք, որ մեզանում վերջ կդրվի «հեռախոսային» արդարադատությանը:

Ցավոք, դատական մարմինները շարունակում են ուղղորդվել կլանների շահերով, եւ «հեռախոսային» արդարադատությանն ավելացել է ընդգծված կլանայինը:

Վերոնշյալ մարմինների եւ, հատկապես, արդարադատության ոլորտի անիրավ գործունեության հետեւանքները կարող են կործանարար լինել ցանկացած իշխանության համար, քանի որ յուրաքանչյուր անարդար դատավարություն հասարակության մեջ ավելացնում է դժգոհների, ըմբոստացողների կամ վրեժխնդրությամբ, ահաբեկչությամբ հարցեր լուծողների թիվը:

Այդ մարդկանց թիվն օրըստօրե աճում է գործադիր, դատական, ոստիկանական մարմինների ապօրինությունների եւ տիրող անպատժելիության հետեւանքով, որոնք բոլորիս, տնտեսականից բացի, կանգնեցրել են ավելի լուրջ՝ բարոյական ճգնաժամի առջեւ:

Այս վիճակն անցանկալի ու անհեռանկարային է բոլորիս համար:

Հույս ունեմ, որ Համաներման այս որոշումը, հաշվի առնելով բոլոր առաջարկները, կլինի ներողամտության քայլ՝ մարտի 1-2-ի հետ կապված բոլորի նկատմամբ, որովհետեւ 10 զոհերի իրական մարդասպանները դեռեւս ազատության մեջ են:



### Ստյոպա Սաֆարյան

Հայաստանի Հանրապետության Նախագահի ներկայացրած «Համաներում հայտարարելու մասին» առաջարկության վերաբերյալ

Հարգելի Աժ նախագահություն, ՀՀ Նախագահի եւ կառավարության ներկայացուցիչներ, գործընկերներ եւ հայրենակիցներ

Մեր երկրի Սահմանադրության համաձայն՝ համաներումն իրավական ակտ է, որի իրականացումը վերապահված է Հանրապետության նախագահին, ով համանման առաջարկություն է ներկայացնում Ազգային ժողովին, իսկ վերջինս էլ իր ընդունելիք որոշմամբ գործողության ուժ է տալու դրան: Պատմության մեջ քիչ չեն դեպքերը, երբ համաներում հայտարարած կայսրերը, միապետերը, պետության ղեկավարները համաներել եւ վերացրել են իրենց ախոյաններին, հակառակորդներին մեղսագրվող արարքները: Պատահական չէ, որ հունական ծագումնաբանությամբ «ամնիստիա» եւ «ամնեզիա» բառերն ունեն նույն բառարմատը: Համաներման դեպքում այն նշանակում է ջնջել, մաքրել, հանել վերացնել ինչ-որ մեկին մեղսագրվող արարքը: Ամնեզիայի դեպքում այն նշանակում է մաքրված, ջնջված հիշողություն: Ուստի, բնական է, որ ամնիստիան որպես իրավական կամ գործադիր ակտ ավելին է, քան ներումը: Այն հիրավի ջրբաժան է դառնում թե համաներողի, եւ թե համաներվողի անցյալի ու ապագայի միջեւ, նրանց հիշողության մեջ ու ապագա գործողություններում նոր ու մաքուր էջ է բացում՝ անցյալի կրկնությունը երբեւէ թույլ չտալու համար: Հիշողությունը մաքրելը, անցյալի հիշողությունից ձերբազատվելը կամ ներելը մեծ ուժ, լայնախոհություն ու հեռատեսություն է պահանջում մարդուց. խիզախության, բայց ոչ թուլության կամ կոտրվելու նշան է: Եւ եթե գնում ես այդ քայլին, պետք է գնաս մինչեւ վերջ, այդ բառի ամբողջ բովանդակությամբ ու իմաստային ծավալով՝ առանց մանրացնելու ամեն ինչ, չսպասելով շուտափույթ գնահատանք ու չակնկալելով կատարածդ քայլի բարեբեր պտուղների անմիջական դրսեւորումը. որովհետեւ առաջին հերթին քեզ ես ազատում անցյալի բեռից ու կոնֆլիկտից, իսկ եթե պետության ղեկավար ես՝ դրանից միաժամանակ ազատում ես նաեւ քո պետությանն ու հասարակությանը, ինքդ ես բացում նոր էջը:

Մայիսի 28-ին՝ Հանարապետության տոնի առթիվ շնորհավորական ուղերձում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը շարադրեց ապագայի իր տեսլականը, որտեղ, ինչպես ինքը ձեւակերպեց՝ «մենք տեսնում ենք Հայաստանը որպես պաշտպանված ու ապահով երկիր, որպես քաղաքական ազատությունների երկիր» եւ այսպես շարունակ: Վերջաբանում Նախագահը հարց է բարձրացնում ու պատասխանում. «Լա՞վ ենք, արդյոք, սերտել այս պատգամը: Ես ասում եմ՝ ո՛չ, ցավոք ո՛չ: Հենց միայն մարտի 1-յան իրադարձությունները բավարար են պնդելու համար, որ մենք դեռ լուրջ անելիքներ ունենք անցյալից դասեր քաղելու հարցում: Բոլորիս ցավը հանդիսացող այդ դեպքերը վկայեցին, որ մեր օրերում եւս հնարավոր է իրավիճակ, երբ պարտվում են բոլորը, պարտվում է միասնականությունը, բարությունը, երբ հաղթանակում է չարացածությունը, անհանդուրժողականությունը, տիրապետում են կրքերը: Ինչ-որ պահի պետք է կանգ առնել: Ինչ-որ պահի պետք է սկսել նոր էջից: Սա են պահանջում անցյալի դասերը, սա է պահանջում մեր երկրի ապագան»:

Ահա այս գեղեցիկ մտքերից հետո բոլորս սպասում էինք դրանց ոգուն ու տառին ամբողջությամբ համապատասխանող քայլի՝ ի դեմս Աժ ներկայացված «Համաներում հայտարարելու մասին» առաջարկության: Ավաղ, մի փոքր հիասթափություն ունեցա, երբ հայտնաբերեցի, որ համաներման առաջարկության տեքստը կազմված է Հանրային կոչված խորհրդի անդամներից մեկի՝ Սոս Սարգսյանի եւ այլոց կողմից հանրությանը ցնցած մի հայտարարության ոգով. այն է՝ ինչու՞ ենք մարտի 1-2-ը Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ հարուցված գործերով մեղադրվողներին առանձնացնում, նրանք սովորական հանցագործներ են: Եւ ահա, համաներման առաջարկությունում հերթական անգամ թացը խառնվում է չորին, քաղաքական բանտարկյալները՝ իրապես հանցագործություն կատարած անձանց, բոլորը սանրվում են նույն սանրով: Խոսելու լինենք առաջին, երկրորդ թե վերջին կետերի մասին՝ համարման պայմանները նույնական են նրանց բոլորի համար: Միգուցե անհամաձայնություն չհայտնեի դրա կապակցությամբ, եթե չլինեին այնպիսի ակնառու փաստեր, ինչի մասին, վստահ եմ, քաջ գիտի Հանրապետության նախագահը:

Անհերքելի է, որ սույն համաներման դրդապատճառը 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները, դրանց արյունոտ վերջաբանը դարձած մարտի 1-ին եւ 2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններն են, որոնց արդյունքում զոհվեց 10 անմեղ մարդ, ձերբակալվեցին հարյուրից ավելին, ազատազրկման դատապարտվեցին տասնյակները: Թույլ տվեք վկայակոչել ԵԽԽՎ 3 բանաձեւերից եւ ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմերբերգի կազմած երկու զեկույցներից հետեւյալ մեջբերումները.

1. այն անձինք, ովքեր կալանավորվել են առերեւույթ արհեստական եւ քաղաքական շարժառիթներ ունեցող մեղադրանքներով կամ նրանք, ովքեր անձնապես չեն կատարել որեւէ բռնի գործողություն կամ դրա հետ կապված լուրջ հանցանքներ, պետք է անհապաղ ազատ արձակվեն (1609),
2. այն գործերը, որոնք դեռ քննության փուլում են, պետք է փակվեն, կամ արագ կերպով ուղարկվեն դատարան՝ ապահովելու համար ողջամիտ ժամկետներում արդար դատաքննության իրավունքը՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (1620),
3. այն անձանց նկատմամբ հարուցված գործերը, ովքեր հիմնականում մեղադրվում են քրեական օրենսգրքի 300 եւ 225 հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, պետք է կարճվեն բացառությամբ երբ առկա են հիմնավոր ապացույցներ առ այն, որ մեղադրյալներն անձնապես կատարել են բռնի գործողություններ կամ հրամայել, դրդել կամ օժանդակել են դրանց կատարմանը (1620),
4. ընդունելի չի կարող լինել այն դատավճիռը, որը հիմնված է բացառապես մեկ ոստիկանական ցուցմունքի վրա՝ առանց լրացուցիչ հիմնավորող ապացույցների (1620):

Վերջապես, ԵԽԽՎ թիվ 1620 բանաձեւով կոչ էր արել.

«Վեհաժողովը կոչ է անում Հայաստանի իշխանություններին, որպեսզի դիտարկեն, որպես բարի կամքի արտահայտում, առկա բոլոր իրավական միջոցները, ներառյալ համաներումը, ներման հրամանագրերը կամ մեղադրանքներից հրաժարումը 2008թ. մարտի 1-ի եւ 2-ի իրադարձությունների կապակցությամբ կալանավորված կամ դատարանի կողմից դատավճիռներ արձակած բոլոր անձանց նկատմամբ, բացառությամբ նրանց, ովքեր անձնապես կատարել են բռնություններ կամ հրամայել, դրդել կամ օժանդակել են նրանց կատարմանը, կամ նրանց, ովքեր կատարել են այլ լուրջ հանցագործություններ՝ հասարակությունում վստահության ձեւավորման եւ բոլոր քաղաքական ուժերի միջեւ երկխոսության խթանման նպատակով»:

Ահա թե ինչու եմ համարում, որ առաջարկվող համաներման առաջարկության փիլիսոփայությունը համահունչ չէ ԵԽԽՎ-ի բանաձեւերով մեր ստանձնած պարտավորություններին: Այդ պարտավորությունները, որոնց իրականացումը առաջին հերթին մեր հասարակության ցանկությունն ու պահանջն է, շատ հստակ չափանիշներ են առաջադրում.

Անազատության մեջ գտնվող մեր 3 գործընկերները՝ Մյասնիկ Մալխասյանը, Սասուն Միքայելյանը, Հակոբ Հակոբյանը, հետախուզման մեջ գտնվող Խաչատուր Սուքիասյանը վստահաբար, նաեւ այսօր քաղբանտարկյալ համարվող անձինք, նման լուրջ հանցագործություններ չեն կատարել, ոչ մի դատարան չի ապացուցել, որ նրանք են 10 սպանությունների անմիջական կատարողը, դրանց հրաման արձակողները: Ինչու պետք է համաներումը տարածվի 225 հոդվածով մեղադրվող մի անձի վրա այն բանի համար, որ անարդար նախաքննության ու դատաքննության արդյունքում նա դատապարտվել է մինչեւ 5 տարի ազատազրկման, մյուսը՝ ոչ: Այս համաներման ժամանակ մի բան, որը պետք է քիչ հաշվի առնվի եւ այն էլ՝ հատկապես 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների, մարտի 1-2-ի դեպքերի կապացությամբ մեղադրվող անձանց պարագայում, դա դատավճիռներն են, իրականացված նախաքննությունը, որոնք ոչ ոքի արժանահավատություն չեն ներշնչում՝ միջազգային հանրությունից մինչեւ ՀՀ քաղաքացիներ: Վկան Թոմաս Համմերբեգի կազմած զեկույցներն են, լուսաբանվող խայտառակ դատավարությունները, որոնցից մի մասին մենք էլ ենք ներկա գտնվել: Հետեւաբար, որն է ելքը եւ իմ առաջարկությունը.

Պետաիրավական հարցերի հանձնաժողովի հարգարժան նախագահը կարծիք հայտնեց, որ պետք չէ ԵԽԽՎ բանաձեւով մեր ստանձնած պարտավորությունների կատարումը կապենք ներքին քաղաքական խնդիրների լուծմանն ուղղված այս քայլի՝ համաներման ընդգրկունության հետ: Ես կիորդորեմ հենց սկսել այս պահից եւ համաներման ընդգրկունության մեծացման ու մեր պարտավորությունների լիակատար կատարման միջոցով ապացուցենք, որ արտաքին քաղաքականությունը բխում եւ ածանցված է ներքին քայլերից, որ արտաքին քաղաքականության հիմնասյունը ներքին խնդիրների այնպիսի լուծումներն են, որոնք արտաքին թատերաբեմում խնդիրներ չեն հարուցի Հայաստանի համար:

**ՀՀ նախագահի հարգելի ներկայացուցիչ, վերոնշյալից ելնելով**

1. Առաջարկում եմ, որպեսզի համաներման առաջարկության մեջ 2-րդ կետի գ) ենթակետը դարձվի առանձին՝ 3-րդ կետ կետ, նրան միավորել նախագահական ընտրությունների քարոզարշավի, քվեարկության ու բողոքարկման փուլերում ձերբակալված, մեղադրվող, դատապարտված եւ/կամ հետախուզվող ընդդիմադիր ակտիվիստների նկատմամբ հարուցված քրեական գործերը եւ համաներում կիրառել նրանց առաջադրված բոլոր հոդվածներով: Հիշեցնեմ, որ հետախուզման մեջ գտնվողներից են Խաչատուր Սուքիասյանը (225.1), Նիկոլ Փաշինյանը (225.1), Վիրաբ Մանուկյանը (225.1), Համլետ Հովհաննիսյանը (225.1), Սեվակ Ստեփանյանը (225.2):
2. 8-րդ կետի է) ենթակետի հետ հակասությունները բացառելու նպատակով այդ ենթակետի ներքո թվարկված համապատասխան հոդվածի հիշատակումից անմիջապես հետո, եթե այն առնչվում է 3-րդ խմբին պատկանող գործերով անցնող մարդկանց, փակագծերում (օրինակ 316-րդ հոդվածի 2-րդ մաս) ավելացնել՝ «բացառությամբ 3-րդ կետում հիշատակված դեպքերի» ձեւակերպումը, եւ այդպես շարունակ: Նույն տրամաբանությամբ 225 հոդվածով համաներում կիրառելի դարձնել նաեւ Սասուն Միքայելյանի նկատմամբ՝ հղում կատարելով 3-րդ խմբին եւ միաժամանակ այլ գործերի պարագայում չխախտելով ը) ենթակետը, որով համաներումը չի տարածվում մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաներում չի նախատեսվում:
3. ավելացված 3 կետում ա) ենթակետ ավելացնել այն բովանդակությամբ, որ անհապաղ եւ անմիջապես կարճվեն այդ խմբի մեջ մտնող բոլոր անձանց նկատմամբ հարուցված բոլոր գործերը, որոնք դեռեւս դատաքննության փուլ չեն հասել, կամ որոնց վերաբերյալ դեռեւս դատավճիռներ չեն արձակվել եւ այս կետի պարագայում բացառել համաներման առաջարկության 8-րդ կետի դ) ենթակետի այն պայմանականությունը, որ նրանք մինչեւ հուլիսի 31-ը պետք է ներկայանան դատարան կամ քննչական մարմիններին, ապա սպասելը, թե նրանք որ հոդվածով եւ ինչ պատժաչափով կդատապարտվեն ու ըստ այդմ օգտվեն կամ չօգտվեն համաներվելու հնարավորությունից:
4. ավելացված 3-րդ կետում բ) ենթակետ, որտեղ վերը հիշատակված տրամաբանությամբ այս խմբին պատկանող անձանց պարագայում բացառվի 8-րդ կետի գ) ենթակետի պայմանականությունը այսինքն՝ այդպիսիք կօգտվեն համաներվելու հնարավորությունից, եթե վերականգնեն տուժողին հասցված նյութական վնասը:
5. Ըստ հերթականության աճման կարգով փոխել մյուս կետերի համարակալումը 1-ով:

Սա է իմ պատկերացրած արդյունավետ, միավորող, համախմբող համաներումը: Այլապես մենք կունենանք միասնություն՝ հանած Սասուն Միքայելյան, Խաչատուր Սուքիասյան, Մուշեղ Սաղաթելյան, Արման Բաբաջանյան, Նիկոլ Փաշինյան, Սափեյաններ ընտանիք եւ այլոք: Թող ներող լինեն նրանք, ում անունը չհիշատակեցի:

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



## 9 հունիսի 2009թ.
## Վարդան Խաչատրյան

Հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունները այսօր գտնվում են բավականին բարդ իրավիճակում: Անորոշությունը պայմանավորված է առաջին հերթին Թուրքիայի եւ Ադրբեջանի բարձրագույն պաշտոնատար անձանց հնչեցրած ու շատ դեպքերում հակասական կարծիքներով: Նշենք, որ Թուրքիայի նախագահը եւ վարչապետը հանդես էին գալիս հայ-թուրքական հարաբերությունների ընթացքի խիստ տարբեր եւ իրարամերժ գնահատականներով: Հայ-թուրքական սահմանի բացման եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին Թուրքիան, փաստորեն, հայտարարություններ է արել, թե սահմանը կարող է բացվել եւ երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ կարող են հաստատվել 2009թ. աշնանից մինչեւ 2012թ. ժամանակահատվածը, ինչը որպես ժամկետ անվիճելիորեն իր մեջ անորոշություն է պարունակում:

Հայ-ադրբեջանական հարաբերությունները վերջին տարվա ընթացքում ունեցել են զարգացման մի քանի փուլ:

1. Մայնդորֆյան հռչակագիրը, որին հաջորդեց Պրահայի գործընթացը (2009թ.) եւ կողմերի սանկտպետերբուրգյան հանդիպումը: Չխորանալով ստեղծված բարդ հարաբերությունների թնջուկի մեջ՝ փորձենք փաստել, թե կողմերն ինչ են շահել այս հարաբերությունների արդյունքում:

*Թուրքիան*

ա) ՀՀ արտգործնախարարության հետ համաձայնեցված ապրիլի 22-ի «ճանապարհային քարտեզի» մասին հայտարարությամբ Թուրքիան շրջանցեց ԱՄՆ-ում հասունացած «Գենոցիդի» ճանաչման գործընթացը, ինչպես նաեւ մեղմեց հայկական «Մեծ ցեղասպանության» հարցով Թուրքիայի վրա համաշխարհային հանրության կողմից իրականացվող ճնշումը:

բ) Հարավային Կովկասում խաղաղության եւ համերաշխության թուրքական նախաձեռնության եւ հայ-թուրքական հարաբերությունների զարգացումների արդյունքում Թուրքիան մուտք գործեց հայ-ադրբեջանական հարաբերությունների՝ Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման դաշտ (ինչից զուրկ էր մինչ այժմ):

գ) Թուրքիայի հաջողությունների թվում է նաեւ այն, որ Ադրբեջանը վերջին քաղաքական ելեւէջների արդյունքում վերջնականապես չշրջվեց դեպի Ռուսաստան, այլ զգալի չափով մնաց Թուրքիայի ազդեցության դաշտում:

*Ադրբեջանը*

ա) Ադրբեջանի գլխավոր ձեռքբերումը Մայնդորֆյան հռչակագրով Ղարաբաղի Հանրապետության բացառումն է՝ որպես հակամարտության կողմ:

բ) Ռուսաստանի հետ ստեղծվեցին ռազմավարական հարաբերություններ՝ առանց լուրջ կորուստների:

գ) Ադրբեջանի անվիճելի հաջողությունների թվում են ՄԱԿ-ի բանաձեւը՝ ի պաշտպանություն Ադրբեջանի տարածքային ամբողջականության եւ «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության՝ Հայաստանին դատապարտող 3 բանաձեւերը:

*Հայաստանը*

Հայաստանի Հանրապետության համար ձեռքբերում դիտարկվող միակ հանգամանքն այն էր, որ ենթադրվում էր, թե Մայնդորֆյան համաձայնագրի ոգուն եւ տառին համապատասխան, Ադրբեջանը պետք է դադարեցներ երկրում ընթացող ինտենսիվ ռազմականացման գործընթացը, սակայն ադրբեջանական կողմի հայտարարությունների եւ վերջին զարգացումների արդյունքում սա տառացիորեն վերանայված կետ է: Իմ խորին համոզմամբ, այդ պարզ եւ չոր հաշվից ելնելով, մեր քաղաքականությունը վերանայման անհրաժեշտություն ունի:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ այժմ իրավիճակը հօգուտ մեզ շրջող արմատական որոշում կայացնելու ժամանակն է:



## 19 մայիսի 2009թ.
## Լարիսա Ալավերդյան

Այս հերթական հայտարարությունս կրկին վերաբերում է Արցախի հիմնահարցին:

ՀՀ Ազգային ժողովը իր պատվիրակություններով տարիներ շարունակ հանդես է գալիս տարբեր միջազգային կազմակերպություններում եւ մասնակցում է տարաբնույթ միջոցառումների, որտեղ քննարկվում կամ հնչեցվում են Արցախի հիմնահարցին վերաբերող խնդիրներ:

Ցավոք սրտի, պետք է արձանագրենք տխուր մի իրողություն. Արցախի հիմնահարցի էությունը բոլոր միջազգային ատյաններում հիմնովին խեղաթյուրված է:

Ավելորդ չեմ համարում հիշեցնել, որ ավելի քան մեկ տարի առաջ Ազգային ժողովը ընդունել է հայտարարություն, որով ԱԺ-ն դիմել է ՀՀ գործող նախագահին եւ կառավարությանը՝ ակտիվորեն սատարել ու աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանը:

Անցել է մեկ տարի, բայց որեւէ քայլ այդ ուղղությամբ առայսօր չի ձեռնարկվել: Ազգային ժողովի առջեւ այսօր ծառացած է ինչքան պատվավոր, այնքան էլ պատասխանատու խնդիր. միջազգային բոլոր ատյաններում վերականգնել Արցախի հիմնահարցի իրական պատկերը եւ փոխել Արցախի հիմնախնդրի կարգավորմանը վերաբերող քննարկումների ընթացքը:

Իմ հայտարարությունն իրականում կոչ է, հորդոր եւ առաջարկություն Ազգային ժողովին: Միջազգային կազմակերպություններում ներկայացված՝ Ազգային ժողովի բոլոր պատվիրակություններին առաջարկում եմ Ազգային ժողովի բոլոր պատվիրակությունների անդամների մասնակցությամբ կազմակերպել քննարկում Արցախի հիմնահարցի շուրջ ստեղծված վերջին շրջանի զարգացումների մասին:

Այդ քննարկումից հետո առաջարկում եմ հանդիպել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատասխանատու ներկայացուցիչների հետ եւ միասնական հայեցակարգ մշակել Արցախի հիմնահարցի արդար կարգավորման վերաբերյալ:

## Անահիտ Բախշյան

Յուրաքանչյուր քառօրյայի հայտարարության ժամին այս ամբիոնից հնչում են քաղաքացիների ոտնահարված իրավունքների մասին տարբեր հայտարարություններ, սակայն՝ «ձայն բարբառո հանապատի», ոչ մի հայտարարություն անհրաժեշտ հետեւանք չի ունենում: Օրինակ, անցյալ հայտարարությունս վերաբերում էր 2004 թվականին դատական մարմինների կողմից քաղաքացիների սեփականությունը գնահատելու ժամանակ թույլ տված անօրինականությունների մասին ՀՀ դատախազության հրապարակած տեղեկանքին, որն այդպես էլ անհետեւանք մնաց: Այդ մասին նամակով դիմել եմ հանրապետության գլխավոր դատախազին, սակայն մինչ օրս դարձյալ ոչ մի պատասխան: Ուրեմն ո՞րն է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված այս հայտարարությունների նպատակը:

Ահա այսօր էլ ինձ հասցեագրված դիմումներից միեւնույն խնդիրների մասին եմ բարձրաձայնելու՝ պահանջելով, որ պատկան մարմիններն արձագանքեն եւ ընթացք տան:

Կրկին բողոք եմ ստացել պետության կողմից գերակա շահ ճանաչված Կոնդի, Ֆիրդուսի եւ Բյուզանդի փողոցի բնակիչներից, որոնք փաստում են, որ ՀՀ անշարժ գույքի կադաստրը եւ Երեւանի քաղաքապետարանը կոպտորեն ոտնահարում են իրենց սեփականության իրավունքները: Քաղաքացիները բողոքում են վերոնշյալ մարմինների կողմից իրենց սեփականության, ժառանգության ճանաչման ոչ միանշանակ վերաբերմունքից եւ կոռուպցիայի անասելի չափերի հասնող փաստերից: Մեր քաղաքացիները տառապում են այն սանձարձակ չինովնիկների վարքի պատճառով, որոնց համար ոչինչ է մարդու իրավունքը ոտնահարելու ճանապարհով հարստանալը: Պատճառն անպատժելիությունն է, օրենքի պահապանների անօրեն գործունեությունը, որը խթանվում է իշխանությունների՝ հատկապես արդարադատության մարմինների ծայրահեղ անարդար, անմարդկային եւ հակապետական գործունեությամբ: Բազմաթիվ բողոքներ ենք ստանում դատական մարմինների վերաբերյալ:

Մասնավորապես դրա վառ օրինակ է Երեւանի քրեական դատարանի դատավորներ Ալեքսան Ազարյանի, Մնացական Մարտիրոսյանի եւ Եվա Դարբինյանի վերջերս կայացրած դատավճիռը, որով 12-ից 15 տարի ազատազրկման են դատապարտվել երեք երիտասարդ՝ շինծու ապացույցների եւ բռնությամբ կորզված ցուցմունքների հիման վրա, եւ որոնք մեղադրվում են սպանության մեջ: Սակայն մեղքն այդպես էլ չի հիմնավորվել փաստերով եւ ապացույցներով: Ես արդեն դիմել եմ Արդարադատության խորհրդին եւ սպասում եմ նրա պատշաճ միջամտությանը: Ոչ ոք չի կարող հերքել փաստը, որ մեզանում մարդը կարող է խստորեն դատապարտվել շինծու ապացույցների եւ բռնությամբ կորզված ցուցմունքների հիման վրա, այսինքն՝ բառացիորեն ոչ ոք պաշտպանված չէ օրենքով:

Եվ վերջին խնդիրը, որի մասին այսօր ուզում եմ բարձրաձայնել, Ռուսաստանի Դաշնությանը «Գույք պարտքի դիմաց» գործարքով տրված «Մարս» գործարանի հետ վաճառված մի կիսավեր շենքի մասին է, որը հաշվեկշռում եղել է որպես հրշեջ տարածք: Այդ կիսավեր շենքում, ուր պայմաններն անմարդկային են, այսօր ապօրինի ծվարել են քառասուներկու ընտանիք, մոտավորապես հարյուր երեսուն մարդ: Ծնվում են երեխաներ, չափահաս են դառնում տղաներ, որոնք առանց անձնագիր ստանալու զորակոչվում են բանակ, սակայն ծառայությունից հետո անձնագիր ստանալու համար անհրաժեշտ է լինում մեր միջնորդությունը: Շենքի պատկանելիության խնդիրը մոտ մեկ տարի առաջ մենք բարձրացրինք, սակայն միջպետական բանակցությունների ընթացքում մինչ օրս լուծում չի ստացել: Բնակիչների կարգավիճակը հայտնի չէ. ոչ մի ծառայությունից չեն օգտվում, շատ հեռու են տրանսպորտի կանգառից, երեխաները դպրոց գնալու համար կիլոմետրերով քայլում են: Մի խոսքով՝ նրանք ամեն առումով օտարված են պետությունից, եւ ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Սահմանադրությամբ այս քաղաքացիներին հասանելիք իրավունքների չիրացման համար: Չեմ ուրանում՝ կան պաշտոնյաներ, որոնց մոտ այս խնդիրները բարձրացվեցին, նրանք հետաքրքրվեցին, սակայն ոչ մի քայլ առաջ չի գնացել խնդրի լուծումը, այնինչ այնտեղ ապրում են մեր քաղաքացիները, որոնց ընտրությունների օրը հիշում եւ տանում են ընտրատեղամաս ու վերջ: Րաֆֆու 111 հասցեում ապրում է նաեւ մի կին, որի ամուսինը զոհվել է վերջին ազատամարտում, իսկ տղան՝ անհետ կորել: Այսօր այդ մոր հոգսը ոչ մեկին չի հուզում: Ես փոխանցում եմ սիրտ ծակող նրա խոսքը. «Այսօր ես անտեր ու անտուն եմ, ինչո՞ւ»:

## Արմեն Մարտիրոսյան

«Ժառանգություն» կուսակցությունն այս ընտրություններում ստանձնել է հանրային վերահսկողի դեր: Եվ հենց դրանից էլ կսկսեմ իմ ելույթը:



Դատապարտում եմ այն խուլիգանությունները, որոնք այս օրերի ընթացքում տեղի ունեցան Երեւան քաղաքի տարբեր համայնքներում: Կարծում եմ, որ ուժային կառույցներն անհապաղ պետք է գտնեն մեղավորներին եւ պատժեն նրանց: Ցավով եմ նշում, որ այս ընդհարումների ժամանակ շրջանառվում էին նաեւ հանրությանը բավականին ծանոթ անուններ: Միաժամանակ պետք է նշեմ, որ, ըստ ոստիկանության ներկայացուցչի հաղորդման, տեղի է ունեցել ընդամենը քաղաքական բարձրաձայն բանավեճ, իսկ քաղաքական դաշտի ներկայացուցիչները ներկայացնում էին կատարվածը՝ որպես կենցաղային հողի վրա տեղի ունեցած վիճաբանություն:

Իշխանության ներկայացուցիչներ, խնդրում եմ կողմնորոշվեք: Ձեր ասածը տվյալ պարագայում որի՞ն է վերաբերում: Այնուամենայնիվ, ես ընդունում եմ մեկ կարծիք, որ ներկայացվել է քաղաքական ուժերի կողմից, այն է, որ այստեղ քաղաքական խնդիր գոյություն չունի: Եվ իսկապես, գոյություն չունի: Քաղաքական խնդրի առկայության պարագայում մենք այսօր Ազգային ժողովում այլ պատկեր կտեսնեինք: Այս ամենը, ինչ տեղի է ունենում այսօր, հունիսի 1-ին այլեւս չի լինելու. նորից գալու է հին ու բարի կոալիցիոն համաձայնության շրջանակը: Այնպես որ, այստեղ քաղաքական շրջանակ պետք չէ գտնել: Տեսնել է պետք որոշակի թաղային, համայնքային չակերտավոր հեղինակությունների պայքար՝ իրենց տարածքներում ավելի ծանրակշիռ երեւալու հանգամանքը պարզելու համար: Սա ընտրական գործընթացից չէ, այլ քրեական օրենսգրքի դաշտից է, եւ համապատասխան մարմինները պետք է համապատասխան աշխատանք տանեն:

Ես ցավում եմ նաեւ այն մասնակիցների համար, ովքեր այդ ծեծկռտուքների կամ այն հրահրումների ընթացքին մասնակցել են:

Հարգելիներս, դուք ընդամենը թնդանոթային միս եք, որովհետեւ վաղը չէ մյուս օրը՝ մայիսի 31-ից հետո, դուք այլեւս պետք չեք գալու: Սա ընդամենը մի մեծ խաղի մի փոքր դրվագ է, որում դուք ձեզանից անկախ մասնակցում եք:

Եվս մեկ անգամ շեշտում եմ, որ այստեղ չկա որեւէ քաղաքական դիրքորոշում: Կոալիցիոն գործընկերներն, ինչպես միշտ, հավատարիմ են եղել միմյանց եւ հավատարիմ են լինելու մայիսի 31-ից հետո՝ հունիսի 1-ին: Նրանց այս գործունեությունը ընդամենը մկաններ ցուցադրելու գործառույթ է, թե ով, որքան ձայն կարող է հավաքել:

Շնորհակալություն:

## Ստյոպա Սաֆարյան

Հարգելի հայրենակիցներ,

Վերջին շրջանում մեծաթիվ են դարձել «Ժառանգություն» խմբակցությանը եւ համանուն կուսակցությանը դիմող փոքր եւ միջին բիզնեսը ներկայացնող մարդկանց գրավոր եւ բանավոր բողոքները: Ես ուզում եմ նույնպես անդրադառնալ այդ խնդիրներին՝ սկսելով մեզ բոլորիս հայտնի, այսպես կոչված, «ինտերնետ ակումբներից» եւ նրանց նկատմամբ իրականացվող հարկային ահաբեկչությունից:

Ուսումնասիրությունները, որ մենք կատարեցինք, սկսվեց «Նետռեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ մեզ ուղղված գրավոր բողոքից. խնդրի էությունը հետեւյալն է՝ տարիներ շարունակ ՀՀ-ում օրենքով սահմանված կարգով գրանցվել, հարկ վճարողի հաշվեհամար են ստացել այդ կազմակերպությունները, տարբեր տարիների տարբեր ժամանակահատվածներում ենթարկվել են հարկային մարմինների կողմից ստուգումների, եւ հանկարծ 2009 թվականին պարզվում է, որ ժողովրդական լեզվով «ինտերնետ ակումբներ» կոչվող այդ հիմնարկները պետք է լիցենզավորված լինեին:

Այս պահի դրությամբ իմ ձեռքի տակ են երկու կազմակերպությունների նկատմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կազմած երկու ակտ եւ, ընդհանրապես, գանգատարկման հանձնաժողովում լսված գործերի երկու որոշում, որոնց համաձայն, այդ կազմակերպությունները պետք է ունենային պարզեցված ընթացակարգով ստացված լիցենզիա: Հիշեցնում եմ եւս մեկ անգամ, որ խոսքը պրովայդերական գործունեություն չիրականացնող կազմակերպությունների մասին է: Եվ արդյունքում այդ կազմակերպությունները ենթարկվել են միլիոնավոր դրամների հասնող տույժի ու տուգանքների՝ այն դեպքում, երբ տարիների ընթացքում նրանց շրջանառությունը նույնպես եղել է մի քանի միլիոն դրամ:

Հարկային մարմինները պնդում են, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ նրանք պետք է ենթարկվեին լիցենզավորման: Եթե հիմք ընդունենք հարկային մարմինների սույն պարզաբանումը, ապա ակնհայտորեն դա նշանակում է, որ վերը նշված կազմակերպությունների վրա պետք է տարածվի «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը, ինչը, մեր կարծիքով, առավելապես վերաբերում է պրովայդերական կազմակերպություններին եւ ոչ ինտերնետ ակումբներին: Այդ դեպքում ստացվում է, որ այս ամբողջ շիլաշփոթի պատասխանատուն Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն է, որը պարտավորություններ ունի «Լիցենզավորման մասին» օրենքի եւ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի համաձայն՝ այդ լիցենզիաները գրանցելու եւ դրանք տրամադրելու հարցում: Հարց է առաջանում, ինչո՞ւ պետք է տարիներ շարունակ անտեսվեին նման խնդիրները եւ հանկարծ 2008 թվականին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գրավոր հարցմանն ի պատասխան,

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պատասխաներ, որ այս կազմակերպությունները, այո, պետք է ունենան պարզեցված ընթացակարգ:

Խնդրի առնչությամբ «Ժառանգությունը» դիմել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ պահանջելով պարզաբանումներ, եւ հուսով ենք, որ առաջիկայում կնշանակվի հարցի քննարկում, եւ մենք կներկայացնենք մեր տեսակետները:

Շնորհակալություն:

**28 Ապրիլի 2009թ.**

**Ստյոպա Սաֆարյան**

Հարգելի հայրենակիցներ,

Այսօր ապրիլի 28-ն է: Ուղիղ մեկ տարի առաջ Ազգային ժողովը 15 կողմ, 62 դեմ եւ 7 ձեռնպահ ձայներով մերժեց «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանի՝ 8 ամիս առաջ ներկայացրած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը ճանաչելու մասին» օրենքի նախագծի ընդգրկումը խորհրդարանի մեծ օրակարգ: Այսինքն՝ ոչ առանց ԱԺ մեղսակցության «թաղվեց» Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչելու մի լավ հնարավորություն աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների ավելի քիչ ռիսկեր պարունակող իրավիճակում, քան այսօր է: Փաստացի ԱԺ-ն այս օրը վերածեց հռչակի նախաձեռնության «հիշատակի տարելիցի» եւ թույլ տվեց, որպեսզի օրինագիծը ԱԺ-ում 8 ամիս քնեցնելու ընթացքում Կոսովոն դառնա առաջատար, իսկ հետագայում էլ՝ մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանը ճանաչի Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունը՝ հստակ եւ միարժեք հղում կատարելով այդ ինքնահռչակ հանրապետությունների հետ Լեռնային Ղարաբաղի «անհամապատասխանության» վրա: Եվ վերջապես՝ Ազգային ժողովը խուսափեց քայլ կատարել Արցախի հետ կապված ստալինյան ծանր ժառանգությունը համարձակորեն պաշտոնապես մերժելու ուղղությամբ:

Հիշեցնեմ, որ Հայոց խորհրդարանում Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման վիժեցմանը նախորդել էր մեր երկրում ժողովրդավարացման դեռեւս կենսունակ մնացած ծիլերի լրջագույն վտանգումը՝ մարտի 1-ին չհիմնավորված արտակարգ դրություն մտցնելով, ազատ խոսքի ու անկախ լրատվամիջոցների, խաղաղ հավաքների ու միավորումների, ազատ տեղաշարժի իրավունքների վրա հակասահմանադրական արգելքներ դնելով, մարտի 4-ին ստալինյան ոգով մեր 4 գործընկերներին անհիմն կերպով անձեռնմխելիությունից ու ազատությունից զրկելով՝ մեր իսկ մեղսակցությամբ:

Ներքին ժողովրդավարության ու Արցախի դատի առաջնման հերթական հնարավորությունները ձախողելու արդյունքում մենք այսօր տեսնում ենք Մադրիդյան կոչված սկզբունքների հաղթարշավը մեր եւ Արցախի ազգային-պետական շահերի վրա, Թուրքիայի վարչապետի հարձակողական սպառնալիքները ՄԱԿ-ում Հայաստանին բռնազավթող ճանաչելու փորձերի կապակցությամբ եւ Ադրբեջանի ղեկավարների նույնատիպ գրոհները, որոնց պետք է որ համարժեք պատասխանեին Հայաստանի պաշտոնյաները: Մենք՝ մեր խոշորագույն բացթողումով, թույլ տվեցինք, որ այդ տխրահռչակ սկզբունքների շուրջ համաձայնություն ստորագրելը կապվի հայ-թուրքական հարաբերությունների հետ, եւ մայիսի 7-ին դա վերջապես դրվելու է ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանի առջեւ: Մենք՝ Արցախի ու վերոնշյալ խնդիրները մեր ձեռքերով «բանտարկելով», թույլ տվեցինք, որ Մադրիդյան սկզբունքների կենսակոչման համար ջանք ու եռանդ չխնայող Թուրքիան՝ ապրիլի 24-ից թուրքական ժամանակով 24 ժամ առաջ, Ցեղասպանության 95-րդ տարելից մուտք գործելու նախաշեմին 95 բառանոց եւ ձեռք բերված գաղտնի համաձայնագրերի հղումով հայտարարություն-ապտակը դնի մեր ու աշխարհի առջեւ, որին, ցավոք, այս անգամ, ի տարբերություն 1921 թվականի, Հայաստանը մասնակից է:

Մենք հորդորում եւ պահանջում ենք հրապարակել այդ հայտարարության մեջ հիշատակվող «համապարփակ շրջանակն» ու «ճանապարհային քարտեզը»: Հրապարակե՛ք հանրության առջեւ թափանցիկության, հաշվետվողականության, հանրային մասնակցության սկզբունքներին համահունչ, որոնք բազմիցս հնչել են նախագահի եւ վարչապետի շուրթերից: Հրապարակե՛ք այս օրերին, երբ տեղի է ունենում Թուրքիայի անվտանգության խորհրդի նիստ, երբ թվարկված բոլոր մարտահրավերներն առաջնային են: Հրապարակե՛ք, եւ միասին կորոշենք՝ գնո՞ւմ ենք մեզ առաջարկվող այդ ճանապարհով, թե՞ ոչ: Իսկ դրան զուգընթաց մենք պետք է անհապաղ վերականգնենք օրենքն ու իրավունքը, մարդու իրավունքներն ու քաղաքացիական ազատությունները մեր երկրում, ազատ արձակենք քաղբանտարկյալներին եւ միասին դիմագրավենք Հայաստանի արդի պատմության մեջ մեր երկրին ուղղված, թերեւս, ամենածանր միջազգային մարտահրավերի առաջ:

**Անահիտ Բախշյան**

Այսօր շատ ցավոտ մի հիմնախնդիր կա, որի սկիզբը դրվել է 2000թ. հունիսի 8-ին Երեւանի քաղաքապետարանի ներկայացրած՝ Հյուսիսային պողոտայի կառուցապատման ռազմավարության ծրագրով:

Անցած 8 տարիներին ընդունվել են բազմաթիվ որոշումներ, որոնք, առանց խտրականության, բոլորն էլ խախտվել են, եւ որոնց հետեւանքով այսօր ունենք հարյուրավոր ընտանիքներ, որոնք հայտնվել են ծանրագույն հոգեկան եւ սոցիալական վիճակում, նրանցից ոմանք էլ՝ չդիմանալով բռնի կերպով իրենց օջախից վտարվելու անարդար փաստին, մահացել են: Նշեմ, որ 2002 թվականից սկսած գերակա շահի ճանաչված տարածքների իրացման գործընթացը եղել է ապօրինի, որովհետեւ օրենքն ընդունվել է 2006-ին եւ դատարանները՝ խախտելով քաղաքացիների սահմանադրական իրավունքը, ոչ մի վճիռ չեն կայացրել հօգուտ բնակիչների, ինչպես որ չի կայացվել ոչ մի վճիռ՝ հօգուտ պետական շահի: Կայացված վճիռները եղել են միմիայն դատավորների հետ զարտուղի ճանապարհով ձեռք բերված համաձայնությունների օգտին, որոնց մասին դատախազությունը 2004 թվականին տարածել է տեղեկանք եւ այդ մասին կհայտնեմ ստորեւ:

Ձեռքիս տակ են 1999 թվականից այդ փաստերի վերաբերյալ ԶԼՄ-ներում հրապարակված բազմաթիվ հոդվածներ: Դրանց վերլուծումից պարզ դարձավ, որ տեղի են ունեցել մի քանի տեսակի ապօրինություններ, որոնք կարելի է խմբավորել.

1. Սեփականության իրավունք ունեցող քաղաքացիներ, որոնց անշարժ գույքը գնահատելիս կիրառվել են տարբեր չափորոշիչներ եւ նույն քառակուսի մետրի դիմաց վճարվել տարբեր գումարներ: Այդ փաստը մինչ օրս բուռն բողոքի առիթ է, փաստերը ձեռքիս տակ են, որոնք ունի նաեւ դատախազությունը,

2. Գերակա շահի ճանաչված տարածքների իրացման արդյունքում բնակարաններ ու փոխհատուցում են ստացել մարդիկ, ովքեր դեռեւս խորհրդային տարիներին ստացել էին բնակարաններ, բայց, ինչ-ինչ ճանապարհով կրկին գրանցվելով նույն չքանդված տարածքներում, փոխհատուցում են ստացել,

3. Հողատարածք ունեցողներ, ովքեր առանց 10 տարի բնակության մասին փաստաթուղթ ներկայացնելու, շուկայական արժեքով ստացել են հսկայական գումարներ՝ այն դեպքում, երբ գոյություն ունեցող տնային գրքում 1928 թվականից հողատարածքներ, շինություններ ունեցող սեփականատերերի գույքը չի գնահատվել շուկայական արժեքով,

4. Տարբեր մակարդակի պետական պաշտոնյաների հետ խարդախ բանակցությունների ճանապարհով փոխհատուցում, բնակարան են ստացել մարդիկ, ովքեր որեւէ կապ չեն ունեցել քաղաքի կենտրոնի տարածքի հետ,

5. Այս խմբում մարդիկ են, ում հետ 2004 թվականից կան կնքված պայմանագրեր, սակայն այդ գործընթացն այսօր դատարանում է եւ, ըստ արդարադատության նախարարի պատասխանի, հայտնի չէ, թե դատարանի դրական կամ բացասական վճռի դեպքում ի՞նչ քայլեր է պատրաստվում ձեռնարկել կառավարությունը մեր քաղաքացիների ձգձգվող խնդրի լուծման ուղղությամբ: Այս քաղաքացիներից շատերը՝ չունենալով գրանցում, հաշվառում, զրկված են սահմանադրական տարրական իրավունքներից:

Հրապարակումները վերաբերում են նաեւ դատարանների ապօրինի գործողություններին, որոնք նկարագրված են 2004 թվականի հոկտեմբերի 22-ին ԶԼՄ-ներով դատախազության տարածված՝ «ՀՀ դատարանների կողմից ապօրինի շինությունների եւ պետական հողերի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին անօրինական վճիռների բողոքարկման գործընթացի վերաբերյալ» տեղեկանքում, որտեղ դատախազությունը՝ ստուգելով անշարժ գույքի իրացման եւ օտարման վերաբերյալ 2003-2004թթ. կայացված վճիռները, պարզել է, որ պետական հողերի վրա կառուցված ինքնակամ շինությունները ճանաչվել են տիրազուրկ, իսկ հողերը՝ հայցեր ներկայացրած քաղաքացիների սեփականություն: Արդյունքում դատարանների, քաղաքապետարանի, «Հյուսիսային պողոտա եւ Կասկադ» ԾԻԳ-ի ապօրինությունների պատճառով հսկայական գումարներ են շորթվել, սակայն դատախազությունը՝ կոծկելով վերը նշված խարդախությունները, ոչ միայն չի կանխել, այլեւ մինչ օրս շարունակում է քողարկել այդ հանցագործությունները:

«Ժառանգություն» խմբակցության պատգամավորներին դիմած բազմաթիվ քաղաքացիների բողոքներից ելնելով, պահանջում ենք սույն հայտարարությունն ընդունել որպես «Հայտարարություն հանցագործության մասին» եւ ընթացք տալ դատախազության՝ 2004թ. հոկտեմբերին տարածած տեղեկանքում առկա փաստերին:

# ՔՎԵԻՍ ՓՈԽԱՐԵՆ

Ազգային կոչված ժողովը կամազուրկ է եւ անմիջապես մեղսակից: Այն, որ ի հեճուկս համաներման արարի, մեր երկրում օրենքի թերիշխանության եւ իրավունքների անհավասարության պարտադրանքով հարատեւելու է համոզմունքի համար կալանավորված քաղաքացիներ ունենալու հակահայկական խարանը՝ հետխորհրդային Հայաստանի ողջ հետագծով ապացուցված ու արդեն կայացած իրողություն է: Մանդատներից մեր պատգամավորական գործընկերների կամայական բռնազրկումը մանր-խորամանկ, քրեածին մտքերի մարտնչող պտուղն է: Նախագահականում, խորհրդարանում կամ այլուր ո՞ր բարձրաստիճան պաշտոնյան է, ով մեղմ ասած՝ իր կամ մերձավոր բարեկամի օրինակով նվազ հանցագործ է, քան պատլիկ վրեժխնդրությամբ պատժվող մեր պատգամավորները: Ոչ, պարոնայք, մենք ճիշտ մարդիկ չե՛նք:

Արդարամտության ու ճշմարտասիրության, միասնության ու ազգային շահի մասին գեղեցկակազմ ճառադասություններն ի զորու չեն՝ սքողելու համար այս բյուրեղյա ինքնաճանաչումը: Մարտի 1-ի համապետական ողբերգության փաստապարտակ դիպաշարը շարքային քաղաքացու աչքի առջեւ է եւ՝ նրան ուղղված անարգանք ու քամահրանք: Ոչ մեկը պակաս չէ Հայաստանի երեք նախագահներից, եւ հենց նրանք են, ում հարկ է իրենց այդ օրերի արարքների ու գործողությունների մասին վկայություն տալ հայ ժողովրդին: Ընտրությունից ընտրություն տեր հռչակվող «ժողովուրդը» պարտական չէ ոչ մեկին, ոչ էլ սերունդները՝ պատանդ, այլ իր ղեկավարների նախավերջին հաշվետերը՝ մինչեւ Աստված:

Ընտրական իշխանափոխություն, անվանվի սա «հերթական», թե «արտահերթ», հայոց ողջ պատմության ընթացքում առաջին անգամ տեղի կունենա, երբ ազգովի՝ եւ հատկապես քաղաքական պատասխանատվության բարեխիղճ կրողները, գիտակցենք ոչ միայն օտարի, թշնամու, ուրիշի, այլեւ սեփական մեղքն ու սխալականությունը՝ պատմական հայրենիք կորցնելու, հրաշքով փրկված հանրապետական մեր արդի անկյունն ապականելու, ի՛ր երկրում հայի ու հայաստանցու ազատությունն ու արժանապատվությունը, հույսն ու հավատը խորտակելու համար: Պարկեշտ ախտորոշման այս ինքնահրամայականից էր մղված՝ եւ ոչ թե պատվիրանների մրցավազքով պայմանավորված, Դաշնակցությանը, Կոնգրեսին, Ժառանգությանը (առաջին հերթին), ինչպես նաեւ մնացյալ մեծերին ու փոքրերին ուղղված՝ հայրենատիրական աննախընթաց հանգրվան համահեղինակելու իմ վաղուց առաջարկած քաղաքացիական մաղթանքը:

Հայաստանի եւ հայության ժողովրդավարական արժեքներն ու ազգային նպատակները պատկանում են՝ միասին եւ բնականաբար, հանրային առաջնահերթությունների միեւնույն օրակարգին: Իր ազատության ու պատկանելության չափով՝ մարդ-քաղաքացին հավաքական իղձերի, ազգային անվտանգության եւ պետական առաջատարության կորիզային արտացոլանքն է: Մերժելով կամ միգուցե կանխանշելով Նախիջեւանի ճակատագիրը՝ Արցախը դարձել է ինքնիշխան, իրավական ու գրեթե ամբողջական պետություն, որն արժանի է ճանաչման, եթե դա իհարկե իրեն տակավին պետք է: Իսկ Ցեղասպանության ու Մեծ հայրենազրկման ամփոփմամբ՝ եթե Թուրքիայի որեւէ պետգործիչ ՄԱԿ-ում կամ այլուրեք թեկուզ մեկ անգամ եւս փորձի կապել հայ-թուրքական հարաբերությունների պաշտոնականացումը որեւէ նախապայմանի հետ՝ լինի դա հակապատմական հանձնաժողովներ, Ղարսի պայմանագիր, ԼՂՀ կամ «occupied» տարածքներ, Հայաստանն իսկույն եւեթ եւ վերջապես պետք է ընդունի Անկարայի իրապես ազնիվ մարտահրավերը՝ ա) վերականգնելով տեւապես բացակայող սիմետրիան, բ) փակելով «առանց նախապայմանների» պատմափուլը եւ գ) պայմանավորելով Հայաստանի մասով արցախյան հիմնալուծումը Թուրքիայի կողմից 1920թ. նոյեմբերին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի վերահաստատմամբ եւ այդ սահմաններից օկուպացիոն զորքերի դուրսբերմամբ:

Քաղաքացիական հպարտությունն է հայրենի հեռանկարի ակունքն ու էությունը: Դրա վերականգնումն իմ եւ մեր Աստվածատուր իրավունքն է: Իսկ դրանից զատ՝ կյանքից, պետությունից, քաղաքականությունից եւ ոչ մեկից չունեմ այլ պահանջ կամ ակնկալիք: Բարով մնանք:

*Րաֆֆի Կ. Հովհաննիսյան*
*23 հունիսի 2009*
*Երեւան*

# ՀԱՄԱՌՈՏ

## «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ

7 մայիսի: «Ժառանգություն» կուսակցությունը մայիսի 7-ին հրապարակված հայտարարությամբ՝ խստորեն դատապարտել է «Շանթ» հեռուստաընկերության հաղորդավար Նվեր Մնացականյանի եւ «Armenia Today» լրատվական գործակալության համակարգող Արգիշտի Կիվիրյանի դեմ իրականացված բռնարարքները: Ազատ խոսքի եւ այլընտրանքային հայացքներ ունեցող քաղաքացիների դեմ ցայսօր անարգել շարունակվող ոտնձգությունները, դրանք պարտակելու ակնհայտ վարքագիծը վկայում են, որ իշխանությունների կողմից լռելյայն խրախուսվում են երկրում արմատավորված անպատժելիության մթնոլորտը եւ իրավական կամայականությունները զանգվածային տեղեկատվության միջոցների ներկայացուցիչների նկատմամբ:

«Ժառանգությունը» իրավապահ մարմիններից պահանջում է անհապաղ բացահայտել եւ օրենքի ողջ խստությամբ պատժել հանցագործներին: Մարդու իրավունքների համակարգված ոտնահարումներն ուղղակի հետեւանք են այն իրողության, որ ՀՀ ոստիկանությունն իր բուն պարտականությունները կատարելու փոխարեն լծվել է իշխանությունների ու նրանց հովանավորյալների սանձարձակությունները կոծկելու եւ լրագրողներին ահաբեկելու անպատվաբեր գործին:

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՇԱԲԱԹ» ՀԱՂՈՐԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



### Անահիտ Բախշյան

ՀՀ նախագահը լուծարել է մի մարմին, որը ձեւավորվել էր միջազգային հանրության ճնշման արդյունքում եւ կոչված էր նպաստելու ընդդիմություն-իշխանություն երկխոսությանը, եւ վայելում էր հասարակության վստահությունը:

ՀՀ նախագահը մեկ անգամ եւս ցուցադրեց ԵԽԽՎ 1609,1620 եւ 1643 բանաձեւերի պահանջները չկատարելուն ուղղված իր հետեւողական գործունեությունը:

ՀՀ նախագահը պատասխանատվություն ստանձնեց Փործագետների փաստահավաք խմբի աշխատանքները վիժեցնելու համար, ինչը վերջին ամիսներին անթաքույց հետապնդում էին խմբում կոալիցիայի առաջադրած անդամները՝ նախ իրենց չաշխատելով ու անգործությամբ, ապաեւ ուղղակիորեն դատախազության ու Հատուկ քննչական ծառայության շահերը պաշտպանելու, խմբի կողմից զեկույցներ կազմելուն տարբեր եղանակներով խոչընդոտելու ձեւով: Սրանք փաստեր են, որոնց մասին ԶԼՄ-ներով խոստովանեցին Փործագետների փաստահավաք խմբում կոալիցիայի առաջադրած ներկայացուցիչները:

ՀՀ նախագահն իր այդ քայլով ապացուցեց, որ շահագրգռված չէ մարտի 1-2-ին տեղի ունեցած դեպքերի, 10 զոհերի սպանության հանգամանքների բացահայտման եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցերում:

Նման զարգացումների խորապատկերին աներկբա ենք համարում, որ իր ինքնահրաժարականն առաջինը ներկայացրած խմբի ղեկավարը շաբաթներ անց խմբի գործունեության մասին իր նկատառումները, ինչպես նաեւ Փործագետների փաստահավաք խմբի չհրկիզվող պահարանում պահվող, վերջին 7 ամիսներին հավաքագրված փաստերն ու նյութերը ԱԺ ժամանակավոր հանձնաժողովին է ներկայացրել ու տրամադրել նախագահականի ճնշումների տակ՝ առանց այդ մասին տեղյակ պահելու խմբի անդամներին:

Զարմանք են առաջացնում իր իսկ հրամանով ստեղծված մարմնի անգործության համար մեղավոր անձանց նկատմամբ ՀՀ նախագահի հանդուրժողականությունն ու ներողամտությունը:

Այդ ամենը վկայում է, որ Փործագետների փաստահավաք խմբի ստեղծումը իշխանությունների հերթական բլեֆն էր եւ ուներ ընդամենը ժամանակ ձգձգելու, միջազգային եւ սեփական ժողովրդի աչքերին թոզ փչելու նպատակ:

Արձանագրելով վերոհիշյալը՝ «Ժառանգություն» կուսակցությունը.

Անընդունելի է համարում Փործագետների փաստահավաք խմբի շուրջ շաբաթներ շարունակ տեղի ունեցած զարգացումների կապակցությամբ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի լռությունը, ով ժամանակին տրտնջում էր փաստեր չունենալուց, իսկ հիմա չընդդիմացավ այն ուժերին, որոնք ակնհայտորեն խոչընդոտեցին եւ վիժեցրին Փործագետների փաստահավաք խմբի գործունեությունը, նրա կողմից փաստերի եւ զեկույցների տրամադրումը հանձնաժողովին:

ԱԺ ժամանակավոր հանձնաժողովում Փործագետների փաստահավաք խմբի անդամների հայթայթած նյութերի «հանկարծակի» հայտնվելու փաստը գն ահատում է իբրեւ յուրացում, որի նպատակն է՝ զրկել ՓՓԽ-ին՝ իր հավաքած փաստերն ամփոփելու իրավունքից ու հնարավորությունից եւ մարտի 1-2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների մեկնաբանությունը «շնորհել» փաստեր հավաքելու հարցում իր անձեռնհասությունն ապացուցած ԱԺ ժամանակավոր հանձնաժողովին:

Գիտակցում է մարտի 1-2-ի դեպքերի ու 10 սպանությունների հանգամանքների բացահայտման հարցում իր պատասխանատվությունը հանրության առջեւ, եւ հետամուտ է լինելու տրամադրության տակ ունեցած փաստերի հրապարակմանը:

**14 հունիսի 2009թ.**



### Արմեն Մարտիրոսյան

Մայիսի 9-ի տոների կապակցությամբ «Ժառանգություն» կուսակցության պատգամավորներս այցելեցինք Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ): Պետք է նշեմ, որ, բացի տոնական միջոցառումներից, մենք ունեցանք բազմաթիվ հանդիպումներ ԼՂՀ-ի քաղաքական ուժերի ներկայացուցիչների եւ քաղաքացիների հետ: Մտահոգությունը, որ բազմիցս արտահայտել է «Ժառանգություն» կուսակցությունը, համապատասխան ընկալումը գտավ ԼՂՀ-ի մեր գործընկերների կողմից: Մտահոգությունները համընդհանուր են:

Առաջին հերթին կարծում ենք, որ ԼՂՀ-ի կողմից ընտրված օրինական իշխանությունները պետք է այսուհետ մասնակցեն Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ բանակցային գործընթացին: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետությունը պետք է ճանաչի ԼՂՀ անկախությունը:

Եվ երկրորդ՝ մենք բոլորս միակարծիք ենք, որ ազատագրված տարածքների մասին կարող են խոսել միայն ԼՂՀ-ի օրինական ընտրված իշխանությունները: Մտահոգությունների առարկա է նաեւ վերաբնակեցման խնդիրը: Ազատագրված տարածքները պետք է վերաբնակեցվեն, եւ այդ առնչությամբ այլ կարծիք լինել չի կարող:

Արցախի մեր գործընկերներն անհանգստացած են հայ-թուրքական հարաբերությունների՝ վերջերս նկատվող ակտիվացումից: Բանակցությունները, որոնք պետք է, ըստ էության, ընթանային առանց նախապայմանների, այդպես չիրականացան: Այսօր արդեն պարզ է, որ Թուրքիայի վարչապետի կողմից բազմիցս արված հայտարարությունները դա են ապացուցում. փորձ է արվում փոխկապակցել ԼՂՀ-ն եւ հայ-թուրքական հարաբերությունները: Համենայնդեպս՝ եթե ոչ փաստաթղթային առումով, ապա իրական բանակցային գործընթացի շրջանակներում:

«Ժառանգություն» խմբակցության պատգամավորներս մտահոգություն ունենք առկա այս խնդրի առնչությամբ: Եթե հայ ժողովրդի հաղթանակի միակ գրավականը միասնությունն է, պետք է նշեմ՝ այս բանակցությունների ընթացքում այդ միասնությունը խաթարվում է: Նկատի ունեմ հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ բանակցությունները, որոնց արդյունքում սփյուռքը կամաց-կամաց օտարվում է ՀՀ-ից, եւ ԼՂՀ-ի խնդրի շուրջ ընթացող բանակցությունները, որոնց արդյունքում Արցախի ժողովուրդն է աստիճանաբար օտարվում ՀՀ-ից:

Մենք եւս մեկ անգամ նշում ենք, որ Հայաստանի, հայ ժողովրդի հաղթանակի միակ գրավականը միասնությունն է: Այդ միասնությունը պետք է լինի սփյուռքի, Արցախի եւ ՀՀ-ի միջեւ: Բայց մենք առաջին հերթին միասնությունը պետք է սկսենք մեր ներսից, ՀՀ-ի ներսից եւ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի օր առաջ ազատ արձակվեն քաղբանտարկյալները, իշխանություններն ընդդիմության, հասարակության հետ նստեն իրական երկխոսության, փորձեն լուծել այն խնդիրները, որոնք այսօր ծառացած են մեր երկրի առջեւ: Արտաքին մարտահրավերներին իսկապես կարողանանք հավուր պատշաճի պատասխան տալ եւ դրա համար մեզ անհրաժեշտ է, որ միասին եւս մեկ անգամ նստենք սեղանի շուրջը եւ փորձենք լուծել այդ խնդիրները:

**17 մայիսի 2009թ.**



### Զարուհի Փոստանջյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ իշխանությունը Հայաստանի Հանրապետությունում պատկանում է ժողովրդին: Սակայն իշխանությունն այս ժողովրդից զավթել են մի քանի իշխանավորներ եւ թելադրում են մեր ժողովրդին իրենց խաղի կանոնները: Հայաստանի Հանրապետության բազմաթիվ քաղաքացիներ հանիրավի գտնվում են բանտախցերում, նրանց նկատմամբ տեղի չի ունենում արդար դատաքննություն, վկաների վրա գործադրվում են ճնշումներ իշխանավորների կողմից, որպեսզի նրանցից կորզեն կեղծ ցուցմունքներ: Այս ամենը խոսում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են մի քանի իշխանավորների հետ պատերազմի մեջ:

Մենք պետք է պայքարենք մեր իրավունքների համար, յուրաքանչյուր քաղաքացի պետք է իրացնի իր իրավունքը, եւ այդ պատճառով էլ մենք պայքարում եւ պայքարելու ենք այդ իրավունքների համար:

Բազմաթիվ խնդիրներ են ծառացած Հայաստանի Հանրապետության առջեւ նաեւ արտաքին հարաբերությունների հարցերում: Արտաքին հարաբերությունները Հայաստանի իշխանավորների կողմից ոչ պատշաճ իրականացնելու արդյունքում վտանգում են մեր երկրի անվտանգությունը: Բազմաթիվ փաստաթղթեր են ստորագրվել իշխանավորների կողմից, որոնք ոչ թե հայանպաստ են, այլ, ընդհակառակը՝ նպաստում են այլ պետությունների շահերին: Այդ պատճառով մենք ասում ենք, որ այն իշխանավորները, որոնք ձեւավորվել են ոչ թե ժողովրդի քվեով, այլ ձեւավորվել են ապօրինի, պետք է հրաժարական տան, այն դատախազն, ով ապօրինի մեղադրանքներ է առաջադրել անմեղ մարդկանց նկատմամբ, պարտավոր է հրաժարական տալ, այն իշխանավորները, ովքեր թելադրում են փաստահավաք խմբին, պարտավոր են հրաժարական տալ:

Փաստահավաք խումբը, որը բավականին նյութեր էր հավաքել մարտի 1-ի ողբերգական իրադարձությունների վերաբերյալ, հնարավորություն չունի շարունակելու իր աշխատանքները, քանի որ խմբի անդամները ճնշման են ենթարկվում գործադիր իշխանության կողմից: Այդ ամենի համար «Ժառանգություն» կուսակցությունը՝ որպես քաղաքական ուժ եւ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է հետապնդել այդ իրավունքների իրացումը:

**31 մայիսի 2009թ.**

# «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏԱՄՈՒՏ ԼԻՆԵԼ ՋԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒ ԱՐԱԳ ԼՈՒԾՄԱՆԸ

26 հունիսի, Երեւան:

«Ժառանգություն» կուսակցությունը, ողջունելով հարևան Վրաստանի նախագահի պաշտոնական այցը Հայաստան՝ այն դիտարկում է որպես երկու բարեկամ ժողովուրդների բազմակողմանի հարաբերությունների զարգացումը խթանող ևս մեկ քայլ: Այդ այցը, մեր կարծիքով, պետք է լիներ երկու հարեւան ժողովուրդների միջեւ բարիդրացիական հարաբերությունների մակարդակը բարձրացնելուն, այդ թվում հատկապես երկուստեք բնակվող ազգակիցների հիմնախնդիրների լուծմանն ուղղված այց: Այդպիսի ակնակալիքը պայմանավորված էր վերջին տարիների ընթացքում Ջավախքի բնակչության ու վիրահայության իրավունքների ոտնահարման բազմաթիվ փաստերով: Ցավոք, ակնկալիքները ոչ միայն չարդարացան, այլ նաեւ ՀՀ իշխանությունները դրսեւորեցին մարդու իրավունքները ոտնահարող քայլեր. ՀՀ ոստիկանության աշխատակիցները և կարմիր բերետավորները ջավախահայերի բողոքի խաղաղ գործողությունները բռնությամբ խոչընդոտեցին և արգելեցին:




Այս կապակցությամբ հայտնելով իր մտահոգությունը, «Ժառանգություն» կուսակցությունը նշում է, որ շարունակելու է իր ուշադրության կենտրոնում պահել ջավախահայերի՝ հայրենի Ջավախքում խաղաղ ապրելու, սոցիալ-տնտեսական բարվոք պայմանների ստեղծման, ինչպեսեւ հայեցի կրթության ու կենսակերպի անհրաժեշտությունը՝ խարսխված Վրաստանի և Հայաստանի բարեկամոն ու անհակամարտ գործընկերության վրա: Նշված համատեքստում՝ «Ժառանգությունը» հայտարարում է, որ Միխայիլ Սահակաշվիլու այցի կապակցությամբ ջավախահայերի կազմակերպած բողոքի խաղաղ միջոցառումները ՀՀ իշխանությունները պարտավոր էին ընդունել որպես Ջավախքում առկա հիմնախնդիրների մասին պատշաճ և միջազգայնորեն ընդունված քաղաքակիրթ հերթական հիշեցում Վրաստանի բարձրաստիճան պատվիրակությանը:

«Ժառանգությունը» խստորեն դատապարտում է ուժային մարմինների անօրինական գործողությունները և մեկ անգամ ևս ՀՀ իշխանություններից պահանջում օրինականության գերակա սկզբունքի և հայ ու վրացի ժողովուրդների դարավոր բարիդրացիության հենքի վրա մշտապես հետամուտ լինել Ջավախքի հիմնախնդիրների արդյունավետ ու արագ լուծմանը:

# ԱՆՁՆԱԿԱՆ` ՈՉԻՆՉ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԱՍՆՅԱԿԸ

**Րաֆֆի Հովհաննիսյան**

Փաստը, որ հայրենադարձը` գրեթե մեկ դար առաջ ցեղասպանության վերապրողների շառավիղից կտակված` հիշատակի ժառանգություն ստացած ամերիկածին մի հայ, հարկադրված է վերնագրել իր մտքերը, կիզակետում պահելով Թուրքիան, եւ ոչ Հայաստանը, բացահայտում է առավել մեծ խնդիր, խորունկ մի վերք եւ ուշացած հրամայական` կամրջելու պատմության ողբերգական վիհի երկու կողմերը:

Նոր Հայաստանը` 1991 թվականից ի վեր անկախացած իր երբեմնի պետականազերծ կարգավիճակից, իմ հանապազ կյանքն է, ինչպես նաեւ իմ համաքաղաքացիների ամենօրյա արժանապատվության, ճշմարիտ ժողովրդավարության, օրենքի գերակայության հասնելու բաղձանքը եւ կեղծ ընտրություններին ու իշխանության կոռուպցիային, ամբարտավանությանն ու անպատասխանատվությանը մեկընդմիշտ վերջ դնելու հանձնառությունը: Չարաչար տառապելով անցյալում` սկսած Օսմանյան կայսրությունից մինչեւ Խորհրդային Միություն, այսօր հայ ժողովուրդը ճակատագրի հեգնանքով իր իսկ հանրապետությունում զրկված է այն նույն իրավունքներից ու ազատություններից, որոնցից տեւապես եւ բռնի ուժով նրան զրկել են օտար կայսրությունները: Հայաստանն արժանի է բարեխիղճ կառավարման ու առավել բարձրակարգ ղեկավարման, եւ այդ ժամանակը մի օր գալու է անտարակույս:

«Սերունդ հաջորդը» ո՛չ զոհ է, ո՛չ հպատակ եւ ո՛չ էլ այլեւս անհավատ «միլիեթ»: Մեզ պետք չէ նվաստացուցիչ խնդրագրերով հայցել հզոր եւ ինքնակարեւորված աշխարհի բարեհաճությունը, ում շահերը հաճախ գերիշխում են սեփական սկզբունքների վրա, եւ ում աշխարհաքաղաքականությունը կլանել է իրենց իսկ հռչակած «ազատություն եւ արդարություն բոլորի համար» արժեքները: Սպառվել են հաճոյանալու մնացած եղանակները:

Եվ այսպես` մաքուր խղճով ու բարյացակամությամբ ես ակնկալում եմ, որ Թուրքիան եւ իր վարչակազմը կընդունեն արդի բազում մարտահրավերները, եւ այս նպատակով առաջարկում եմ պարզ իրողությունների, բայց ոչ մերկապարանոց պատվիրանների մի ցանկ, որը կօգնի կենսակոչելու նոր շրջափուլ` ուղղված տարածաշրջանային փոխըմբռնման հաստատմանը եւ այնպիսի խաղաղ աշխարհակարգի իրականացմանը, որը չի հանդուրժում թե՛ զոհերի եւ թե՛ զոհեր պատճառողների առկայությունը:

1. Յոթ չափիր, մեկ կտրիր: Այս հին ասացվածքը հստակ դաս է ժամանակակից պաշտոնյաների համար: Մինչ «ուսուցողական հրթիռներով» գրոհելը` լինի դա Դավոսում կամ այլուրեք, ի շարս ուրիշների բացթողումների դատապարտման, նախ գիտակցեք ձեր նախատինքների բովանդակությունն ու հետեւանքները եւ մտածեք դրանք արտահայտելու ձեր իրավասության մասին: Սա նեղ հայկական պնդում չէ. այն պարունակում է բոլոր համապատասխան գործոնները` ներառյալ Կիպրոսը, քրդերը, ասորիները, ալեւիները, հրեաները եւ այլ փոքրամասնություններ: «Բռնազավթումը» ամենավերջին եզրույթը պետք է լինի թուրք ներկայացուցիչների համար, ովքեր այն կիրառում են տարբեր ուժագծերով միջազգային ամենատարբեր ասպարեզներում, քանի դեռ մեկ ուրիշը նրանց մոտ չի դիմազերծել երեսպաշտության դասագրքային սահմանումը: Պահպանեք արժանապատվությունը, բայց զգույշ առաջ շարժվեք, որովհետեւ պատմությունը հզոր եւ մնայուն նախադեպ է:
2. Ներհայեցողություն: Ժողովրդավարությունները վաստակում են ներքին հաջողություն, հավակնորդները հասնում են եվրոպական սերտաճման, եւ երկրները տարածաշրջանում առաջնորդ են դառնում սոսկ այն ժամանակ, երբ ունենում են այս գործընթացն անցնելու քաղաքական խիզախություն ու բարոյական տոկունություն: Դեմ հանդիման ելեք ինքներդ ձեզ, ձեր սեփական վարքին եւ այն պետության հետագծին, որի անունից ներկայանում եք: Կարեւոր են ոչ միայն հաջողության պատմադեպերն ու հպարտության դրվագները, այլեւ ամբողջ համայնապատկերը: Ազնիվ ու համարձակ եղեք այդ հարցում. դուք ունեք տասնամյակներ ի վեր շարունակվող ժխտողականությանը վերջ դնելու ներուժը: Քաղաքացիական հասարակության շրջանում վերջին միտումները` թեպետ երկչոտ ու նախնական, այդ մասին են վկայում:
3. Հայոց ցեղասպանությունը: Մի տանջվեք ելքեր որոնելիս, պատասխանատվությունը վերցրեք ձեր ուսերին: Այնքան մեծաքանակ են ԱՄՆ Ազգային եւ Բրիտանական պետական պահոցներում, Քեյ դ՛Օրսեյում (Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունում), նույնիսկ գերմանական ռազմական արխիվներում այդ մասին վկայող փաստաթղթերը, որ ինքնաբերաբար ի դերեւ կարվեն տարիների ընթացքում կուտակված պաշտոնական ժխտման բոլոր պնդումները: Սակայն սա միայն թղթաբանությունն է: Ամենազազրելի վկայությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանության կամ, Ամերիկայի այն ժամանակվա դեսպանի խոսքով ասած, «ցեղային բնաջնջման» ակնբախ միջոցով մեկ միլիոնից ավելի մարդկային կյանքերի սպանդը չէ միայն:
4. Հայրենասպանություն: Որքան էլ անհավատալի հնչի, ցեղասպանությունից առավել վատթարը կանխամտածված կերպով մի ամբողջ ժողովրդի բռնազրկումն է իր բնօրրանից: Եվ հենց դա է կատարվել: Ինչը հավասարազոր է Հայոց մեծ հայրենազրկմանը` ավելի քան չորս հազարամյակ ժառանգական իր հայրենիքում ապրող մի ազգ (պարբերաբար իր սեփական ինքնիշխան թագավորություններն ունեցող եւ ավելի հաճախ որպես կայսրությունների կողմից բռնազավթված հպատակ հանդիսացող) ընդամենը ամիսների ընթացքում վայրագաբար, բռնացիորեն, ամբողջապես արմատախիլ արվեց սեփական հողից ու ոչնչացվեց: Այդպիսով` տների ու տարածքների, եկեղեցիների ու վանքերի, դպրոցների ու համալսարանների, գրադարանների ու հիվանդանոցների, կալվածքների ու շինությունների ավարառությունը` աննախադեպ լինելով մարդկության պատմության մեջ, մինչ օրս հանդիսանում է սպանություն ոչ միայն մի ժողովրդի, այլեւ մի քաղաքակրթության, մի մշակույթի եւ ժամանակի քննությունը բռնած մի ողջ կենսակերպի: Ահա թե ինչն է, որ այս ամենը ցեղասպանություն կամ այլ անվամբ կոչելու բանավեճը դարձնում է անհեթեթ, անկարեւոր եւ երրորդական: Մի ողջ հայրենիք բզկտվեց Թուրքիայի Հանրապետության նախահոր կողմից` աշխարհի հայացքի ներքո, եւ այժմ մենք բանակցում ենք մի բառի շուրջ: Իսկ այդ բառեզրն անգամ չի պարփակում ոճրագործության բուն խորքն ու ծավալը:
5. Մաքրագործվել: Սա է առաջ ընթանալու միակ ուղին: Սա սպառնալիք չէ, այլ պարզորոշ մի փաստ: Մի վախեցեք արդարության գնապիտակից: Հայերի կորցրածն անգին է: Հակափաստարկների ու տարաբնույթ հանձնաժողովային ձեռնածությունների միջոցով եղերական այս ժառանգությունից բնազդորեն ու շարունակաբար խույս տալու փոխարեն անդրադարձեք իրական դիպաշարին: Եվ փոխանակ բողոքարկելու կամ կանխատեսելու հայոց հավանական պահանջները, ապավինեք ձեր սեփական քննադատական ինքնադիտողությանը եւ ինքներդ ասացեք, թե ինչ եք նախատեսում` ուղղելու սխալը, փոխհատուցելու ու կրթելու, վերակենդանացնելու ու վերականգնելու, նաեւ տոնելու արդի Արեւելյան Թուրքիայի հայկական ինքնությունը, այո՛, դուք, մենք եւ Հրանտը` միասին: Վերջապես ձեռնարկեք իրական հաշտեցման տանող ձեր առայժմ չարած քայլը` հիմնված դաժան ճշմարտության եւ անկեղծության նորարար հորդորի վրա:
6. Այլեւս երբեք: Իրականության ճանաչման վարձքն ավելի ծանրակշիռ է, քան դրանից բխող վտանգները: Ցավոք, Ողջակիզման ինքնատիպությունը ոչ թե «Շոա»-ն էր իր ողջ նենգության մեջ, այլ հետպատերազմյան Գերմանիայի վարքագծում արտահայտված հանձնառությունը` ճանաչել պատմությունն ու ինքն իրեն, պատասխանատվություն ստանձնել նախորդ վարչակարգի կողմից կատարված ոճրագործությունների համար, սգալ ու հարգել, ներողամտություն հայցել ու վարձահատույց լինել եւ սույն վարքականոնը ներդնել հանրային գիտակցության ու պետության մեթոդաբանության մեջ: Այսօր Գերմանիան` որպես ժողովրդավար աշխարհի լիդերներից մեկը, միայն շահել ու զարգացել է իր այդ արժանավայել պահվածքի շնորհիվ: Բրանդի ծնրադրությունը չպետք է մնա որպես եզակի օրինակ: Եվրոպական ապագա խոստացող նոր Թուրքիայի ճշմարտացի առաջնորդը թերեւս նույնկերպ գործի` ոչ թե զիջելով, այլ էապես արտացոլելով իր եւ իր ազգի հպարտությունն ու պատիվը: Իմ մեծ մայրը` օրդուցի փոքրիկ Խնկենին, ով բարեբախտաբար չկիսեց իր ընտանիքի դաժան ճակատագիրը` ցեղասպանությունը վերապրելով իր թուրք հարեւանի օրինյալ վեհանձնության շնորհիվ, չապրեց այնքան, որ տեսնի այդ օրը:
7. Ուժի քաղաքականությունը: Թուրքիայի դաշնակիցները կարող են նրան օգնել այս ճանապարհին: Վաշինգտոնը եւ իր անդրատլանտյան գործընկերները, Եվրոպական Միությունը, մահմեդական աշխարհը կամ էլ, նույնիսկ, Մոսկվան, որին Անկարան վերջերս զարմանալիորեն մերձենում է, միգուցե ազդարարի, որ մեր թվարկության երրորդ հազարամյակում աշխարհը պիտի ղեկավարվի կանոնների եւ ուղենիշների մի այլ արժեհամակարգով, որ ուժը պետք է հարգի իրավունքը, որ մարդկության դեմ ցանկացած ոճրագործություն կամ դրա ուրացումը չի հանդուրժվելու: Օբամայի վարչակազմը կրում է բեռը` միաժամանակ ունենալով լույսի այս լիդերության անհրաժեշտ կարողականությունը: Եվ այն շուտով ու կրկին քննության կդրվի:
8. Թուրքիա եւ Հայաստան: Այս ինքնիշխան դրկիցները պատմության ողջ ընթացքում երբեւէ երկկողմ համաձայնության չեն եկել: Լինի դիվանագիտական, տնտեսական, քաղաքական, տարածքային կամ անվտանգության հատուկ` իրենց փոխհարաբերություններում որեւիցե ոլորտ, կամ նույնիսկ դրանց բացարձակ բացակայությունը, չի կարգավորվում զուտ երկու հանրապետությունների շրջանակում` ազատ, արդար եւ ուղղակի համաձայնությամբ: Արդ, ժամանակն է: Հետեւաբար, պաշտոնական շփումների ու երկկողմ հանդիպումների գործընթացը, որն ի հայտ եկավ 2008թ. սեպտեմբերին Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային խաղի հետքերով, պետք է հաշվի առնի այս բացը եւ կառուցի երկխոսությունն այնպես, որ անցյալի բաժանումներից ոչ թե պետք է փախչել, այլ հարկ է կամրջել դրանք` անհապաղ եւ առանց նախապայմանների հաստատելով դիվանագիտական հարաբերություններ, առ ոչինչ համարելով Թուրքիայի կողմից ապօրինաբար հարուցված սահմանային շրջափակումը, ինչպես նաեւ իրագործելով բաց ու բաժանարար բոլոր հարցերի համալիր քննարկում ու բանակցված հանգուցալուծում` հիմնված պատմության ընդունման եւ դրա կրկնությունից երաշխավորված ապագայի հանձնառության վրա: Իսկ երկխոսության իրողությունը, որքան էլ առերես խրախուսական լինի, չպետք է հանդիսանա որպես կեղծ արդարացում` կասեցնելու համար երրորդ կողմի խորհրդարանների եւ, մասնավորապես, ԱՄՆ Կոնգրեսի որոշումները կամ բանաձեւերը, որոնք պարզապես ջանում են վերահաստատել պատմական ճշտարարությունը: Այսպիսի վարքագիծը` հեռու լինելով շատերի ակնկալած պետականավայել քաղաքականությունից, կհակասի տվյալ հաշտեցման նպատակին ու ոգուն:
9. Անցյալը` որպես ներկա: Հայկական ներկա պետությունն ընդգրկում է փոքրիկ մի մասն այն ընդարձակ պատմական բարձրավանդակի, որտեղ հայերն ապրել են դեռեւս Քրիստոսից առաջ` դարերի խորքից հասնելով մինչեւ հայրենիքի եւ մարդկության համապարփակ օտարումը, որն էր 1915-ը: 70 տարի շարունակ գոյատեւելով իբրեւ ԽՍՀՄ ամենափոքր հանրապետությունը` Խորհրդային Հայաստանը միակ մնացորդային մասնիկն էր հայրենի այն ժառանգությանը, որում 1921 թվականի խորհրդային-թուրքական համաձայնագրերով (Մոլոտով-Ռիբենտրոպի հայկական համարժեքները) հայերին թույլատրված էր սոսկ տեղ ունենալ` պահպանելու իրենց հավաքական գոյությունը Կրեմլի իրավասության տակ: Նույնիսկ այնքան ակնհայտ հայկական օրրանները, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղն ու Նախիջեւանը, անջատվեցին բոլշեւիկ-քեմալիստական մեղսակցությամբ եւ Ստալինի` «բաժանիր, որ տիրես» մտավարժանքին ի տրիտուր, բռնի դիկտատով ենթարկվեցին Խորհրդային Ադրբեջանի վերահսկողությանը: Ուստի, որքան էլ տարօրինակ թվա, նկատի առնելով Ադրբեջանի հետ Թուրքիայի էթնիկ ազգակցությունը, արդի Թուրքիան Կովկասում նույնպես ունի իր հնացած ուղեգծերը նորովի շտկված քաղաքականությամբ փոխարինելու հիմնախնդիր: Այս բարձր պարտականությունը վերաբերում է ոչ միայն ի նպաստ Հայաստանի Հանրապետության հետ որակապես բարելավված եւ մաքրագործված հարաբերակարգի, այլեւ ի հարգանս տարածաշրջանային նոր իրողությունների:
10. Լեռնային Ղարաբաղ` ծովից ծով: Հայերենում Արցախ անունով Հայկական բարձրավանդակի արեւելյան այս եզերքը Խորհրդային Ադրբեջանից անկախացավ 1991 թվականին` ԽՍՀՄ օրենսդրության, միջազգային իրավունքի եւ Մոնթեվիդեոյի Կոնվենցիային խստիվ համապատասխան: Ի հեճուկս ազատության եւ ինքնության համար «Դավիթ-Գոլիաթի» հանգույն մղված պայքարի հավանականություններին, նրա ժողովուրդն արիաբար պաշտպանեց իր օջախներն ու տները նախ` սադրանքների ու ջարդերի դեմ, ապաեւ` քաղաքացիական թիրախներով արձակված «Գրադ» տեսակի հրթիռների, գնդիկավոր ռումբերի ու օդային այլ անխտրական ռմբակոծումների, եւ վերջապես` ի պատասխան նախահարձակ ամբողջական պատե-



Շարունակությունը` էջ 10

# «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Սիրելի հայրենակիցներ,

Տարիներ շարունակ «Ղարաբաղյան» անվանվող հիմնախնդրի էությունը իրականում Արցախի նկատմամբ Ադրբեջանի տարածքային հավակնությունների մեջ է: Թեեւ ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի նախագահների հուլիսի 10-ի հայտարարությունը դեռեւս չի բացահայտում Մադրիդյան անվանված սկզբունքները պարունակող բուն (նորացված) փաստաթուղթը, որը պետք է դրվի ղարաբաղյան հիմնախնդրի լուծման հիմքում, սակայն գաղտնազերծված դրույթներն էլ արդեն բավարար հիմք են տալիս պնդելու, որ Արցախի՝ համայն հայության ու նախեւառաջ արցախցիների հերոսական պայքարի եւ անասելի զրկանքների գնով նվաճված ազատությունն ու ինքնիշխանությունը փորձում են վտանգել: Հայաստանի Հանրապետության իշխանությունների անհեռատես քաղաքականության եւ ներքին լեգիտիմության պակասի արդյունքում ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը հասել է մի հանգրվանի, որը որեւէ աղերս չունի հայ ազգային շահերի ապահովման հետ եւ որի վերաբերյալ «Ժառանգությունը» բազմիցս ահազանգել է, այդ թվում դատապարտելով 2008թ. նոյեմբերի 2-ին Մոսկվայում Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների կողմից ստորագրված «Մայնդորֆյան» հռչակագիրը՝ անմիջապես դրա ստորագրումից հետո: Հռչակագիր, որը պարունակում էր պարտավորություն՝ լուծել ղարաբաղյան հիմնախնդիրն այն ժամանակ հանրությանն իբր անհայտ, բայց իրականում իշխանություններին քաջ հայտնի Մադրիդյան սկզբունքների շրջանակներում:

«Ժառանգություն» կուսակցությունը.

- պնդում է իր դիրքորոշումն առ այն, որ Արցախի ժողովրդի դեմ պատերազմ սանձազերծած եւ դրա ընթացքում, ինչպեսեւ նախկինում, իր տարածքից էթնիկ զտման ճանապարհով հայ բնակչությանը տեղահանած, Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանն ու Գետաշենի ենթաշրջանը, Մարտակերտի եւ Մարտունու շրջանների որոշ հատվածներ մինչ օրս էլ օկուպացիայի տակ պահող, Նախիջեւանը հայաթափած, այդ երկրամասում եւ ողջ Ադրբեջանի տարածքում հայկական մշակութային արժեքները բնաջնջած, Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում հայ ժողովրդի ցեղասպանություն իրագործած պետությունը՝ Ադրբեջանը, չի կարող լինել Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը.

- մնում է իր տեսակետին՝ ՀՀ Ազգային ժողովի, ապաեւ ամբողջ միջազգային հանրության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության՝ օր առաջ ճանաչման անհրաժեշտության վերաբերյալ, ինչը բխում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից՝ մի կողմից ժողովուրդների ինքնորոշման, մյուս կողմից՝ ժողովուրդների ապագաղութացման իրավունքից, որը արցախահայության անվտանգության գլխավոր երաշխիքն է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինականորեն իրացված ինքնորոշման եւ ապագաղութացման իրավունքները եւ դրանց արդյունքում կայացած անկախ պետականությունը պարբերաբար ոտնահարվել են թե՛ Ադրբեջանի, թե՛ միջազգային հանրության կողմից. մի մոտեցում, որին, ցավոք, նպաստել է ՀՀ իշխանությունների՝ մինչ օրս վարած անդեմ, ոչ նախաձեռնողական քաղաքականությունը.

- Արցախին միշտ վերաբերել է որպես անկախ պետության եւ, հետեւաբար, ջանք չի խնայելու, որպեսզի ԼՂՀ անկախությունը ճանաչվի նախեւառաջ Հայաստանի, ապաեւ միջազգային հանրության կողմից: Սակայն ՀՀ ԱԺ-ն բացառեց նույնիսկ այդ հարցի քննարկումը, իսկ ԼՂՀ ղեկավարությունը ընդհանրապես չարձագանքեց այդ նախաձեռնությանը: ԼՂՀ անկախության հարցի պաշտոնականացման նպատակով կուսակցության վարչությունը առաջիկա նիստում կքննարկի նրա ճանաչման հարցը «Ժառանգություն» կուսակցության կողմից: Մենք նաեւ կոչ ենք անում բոլոր հետաքրքրված կուսակցություններին եւ հասարակական կազմակերպություններին՝ քննարկել ԼՂՀ ճանաչման հարցը եւ առաջիկա իրենց գործողություններում ղեկավարվել ընդունված որոշմամբ.

- վերահաստատում է ամիսներ առաջ հնչեցրած իր դիրքորոշումն առ այն, որ սահմանազատման հետ կապված ցանկացած լուծում կարող է լինել բացառապես փոխադարձ եւ համարժեք, իսկ փախստականների վերադարձը՝ համալիր, համակողմանի՝ ներառելով Ադրբեջանի ամբողջ տարածքը, Դաշտային Արցախը եւ Նախիջեւանը.

- շարունակում է համամիտ մնալ միջնորդների եւ միջազգային կազմակերպությունների այն մոտեցմանը, ըստ որի՝ ղարաբաղյան հիմնախնդրի հակամարտության կարգավորման խաղաղ ուղիները պետք է գտնեն հենց հակամարտության կողմ հանդիսացող հասարակությունները Լեռնային Ղարաբաղում, Հայաստանում եւ Ադրբեջանում, իսկ մյուս բոլոր պետությունները, որոնք կողմերին օգնում են այդ հարցում, կարող են հանդես գալ միայն միջնորդների դիրքերից՝ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման երաշխավորի դերում:

Հարգելի արցախահայեր, մենք՝ «Ժառանգություն» կուսակցության անդամներս, հայտարարում ենք, որ գաղտնազերծված Մադրիդյան սկզբունքները ոչ միայն անընդունելի են համայն հայության համար, այլ նաեւ երբեւէ չեն կարող իրականանալ: Աշխարհի երեսին ոչ ոք իրավունք չունի ոտնձգություն իրականացնել ազատության եւ ինքնիշխանության ձեր աստվածատուր իրավունքի վրա, որը դուք եւ համայն հայությունը արդեն պատվով եւ արիաբար նվաճել ու պաշտպանել ենք Ադրբեջանի կողմից մեզ պարտադրված պատերազմի ընթացքում: Մենք վերահաստատում ենք մեր պատրաստակամությունը ուժերի ներածին չափով սատար կանգնել ձեր այդ իրավունքին:

Սիրելի հայրենակիցներ, Հայաստանում, Սփյուռքում եւ Արցախում, անկախ հիմնախնդրի լուծմանը վերաբերող հետագա զարգացումներից, կոչ ենք անում ձեզ՝ շարունակել ամուր կանգնած մնալ հայրենի հողին, որը համայն հայության ազատության խորհրդանիշն է: «Ժառանգությունը» իր քաղաքական բոլոր հնարավորությունները հետայսու եւս ի սպաս կդնի՝ հանուն անկախ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման:

*15 հուլիսի 2009թ.*
*Երեւան*

# ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՈՏ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԲԱՐՁՐԱՑՐԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1 հուլիսի 2009թ.: ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանն այսօր ԱԺ «Ժառանգություն» խմբակցության անդամների հետ քննարկեց նույն խմբակցության պատգամավոր Անահիտ Բախշյանի կողմից բարձրացված Սյունիքի մարզում առկա մի շարք խնդիրներ:

Փոխվարչապետը տեղեկացրեց, որ նամակում բարձրացված բոլոր հարցերը ՀՀ վարչապետի մասնակցությամբ հունիսի 26-ին քննարկվել են Կապանում: Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրինությունը պարտավորվել է հուլիսի առաջին տասնօրյակում վերագործարկել գործարանը, իսկ աշխատավարձի երկու ամսվա պարտքերը մարել մինչեւ հուլիսի վերջը: Ինչպես պարտավորվել էին դեռ անցած տարվա նոյեմբերին, կոմբինատում կաշխատի 900 մարդ:

ԱԺ պատգամավորի կողմից կատարված առաջարկը՝ վերագործարկել Ագարակի քաղաքապետարանի ենթակայության «Մեծածախ եւ մանրածախ ապրանքների շուկա» ՓԲԸ-ն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հանդիպմանը մասնակցող ներկայացուցիչներն աննպատակահարմար համարեցին՝ վկայակոչելով շուկայի նախկին թերծանրաբեռնվածությունը եւ մաքսանենգ ապրանքների վաճառքը:

Փոխվարչապետն Անահիտ Բախշյանին, ԱԺ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Արմեն Մարտիրոսյանին եւ խմբակցության անդամ Ստեփան Սաֆարյանին տեղեկացրեց, որ Մեղրիի տարածաշրջանի բնակիչների համար լուծումներ կգտնվեն նաեւ Իրանից ներկրվող հեղուկ վառելիքի օգտագործման համար:

Արմեն Գեւորգյանը հանդիպման մասնակիցներին ներկայացրեց ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ին Կապանում կայացած արտագնա նիստում հաստատված «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը», ինչպես նաեւ մարզի սոցիալ-տնտեսական եւ մշակութային զարգացմանը միտված մի շարք այլ որոշումներ: Մասնավորապես՝ հանքարդյունաբերական ոլորտի ընկերություններին բյուջետային վարկեր տրամադրելու, Սյունիքի մարզի մշակութային հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ցանկին հավանություն տալու, Տաթեւ վանական համալիրը եւ հարակից համայնքները «Տաթեւ» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու, ինչպես նաեւ այլ որոշումներ եւ ծրագրեր:

# «ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ» ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

7 հուլիսի 2009թ. Երեւան: «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Արմեն Մարտիրոսյանը, ԱԺ պատգամավոր Ստյոպա Սաֆարյանը, կուսակցության մամուլի խոսնակ Հովսեփ Խուրշուդյանը եւ այլեւս լուծարված Փորձագետների փաստահավաք խմբում «Ժառանգության» ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանը Հայաստանում ԱՄՆ դեսպանատանը մասնակցեցին ԱՄՆ անկախության 233-րդ տարեդարձին նվիրված միջոցառմանը: Միջոցառման շրջանակներում «Ժառանգության» ներկայացուցիչները հանդիպեցին միջազգային դիվանագետների, նրանց թվում եւ Մինսկի խմբում ամերիկյան համանախագահ Մեթյու Բրայզայի հետ: Փոխանակվեցին տարածաշրջանային վերջին զարգացումների վերաբերյալ գնահատականներ:

Հուլիսի 8-ին «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Արմեն Մարտիրոսյանը եւ Ստյոպա Սաֆարյանը հանդիպում ունեցան Գերմանիայի Դաշնային կառավարության մարդու իրավունքների եւ մարդասիրական օգնության հարցերով հանձնակատար պարոն Գյունտեր Նուկեի, նրա օգնական Բրիտ Պրեխելի եւ գերմանական ռադիոընկերության լրագրողի հետ:

Նրանք քննարկեցին 2008 թվականի մարտի 1-ին եւ 2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած արյունոտ իրադարձություններին, այդ դեպքերով ձերբակալված քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակմանը, ԱԺ 4 պատգամավորներին ապօրինի եւ անհիմն անձեռնմխելիությունից, ազատությունից, ապա նաեւ՝ մանդատից զրկելուն, ոստիկանության ցուցմունքներով ազատազրկված անձանց, 10 սպանության հանգամանքների չբացահայտմանը, ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի անվստահելիությանը, վերջերս հայտարարված ոչ համընդգրկուն համաներմանը, իրավապահ մարմիններին ներկայացած հետախուզվող ընդդիմադիրների մասով ԵԽԽՎ 1677 բանաձեւով ստանձնած պարտավորության խախտմանը, 2009թ. մայիսի 31-ին Երեւանի ավագանու ընտրություններին ու հետընտրական իրավիճակին, Հեռուստատեսության եւ Ռադիոյի Ազգային հանձնաժողովում ընդդիմության կողմից թեկնածուներ առաջադրելուն ու հանձնաժողովը հավասարակշիռ դարձնելուն, Մարդու Իրավունքների Եվրոպական դատարանի վճռի կատարման ու «Ա1+» հեռուստաընկերության վերաբացմանը, Հայաստանի ժողովրդավարացմանը եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը վերաբերող հարցեր:

Արմեն Մարտիրոսյանը եւ Ստեփան Սաֆարյանը գերմանական ռադիոընկերությանը նաեւ հարցազրույց տվեցին հայ-թուրքական հարաբերությունների ու Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման հեռանկարների ու ընթացիկ փուլի կապակցությամբ՝ նշված հարցերի վերաբերյալ «Ժառանգություն» կուսակցության հանրահայտ դիրքորոշումների շրջանակներում:

# ԱՆՁՆԱԿԱՆ՝ ՈՉԻՆՉ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԱՍՆՅԱԿԸ

Սկիզբը՝ էջ 9

ռազմի, որը մեկտեղել էր ադրբեջանական զինված ուժերը, թուրք ռազմական խորհրդատուներին եւ նրանց միջոցով նաեւ՝ ՆԱՏՕ-ական զինամթերքը, «մոջահեթ» վարձկաններին ու խորհրդային զորքերից ածանցված որոշ անկանոն միավորումների:

Արդի պատմության ողբերգականության տեսակետից գրեթե հրաշք է թվում այն, որ Արցախի հայերը կարողացան հաջողությամբ պաշտպանել հայրենի հողը, հետագա հարձակումներից ապահովագրել իրենց սահմանները եւ, ի վերջո, դիմակայել չափն անցնող հակագրոհ կենսագործելու գայթակղությանը՝ 1994թ. մայիսին Ադրբեջանի հետ ստորագրելով զինադադարի պայմանագիր: Ի տարբերություն Նախիջեւանի (որտեղ այսօր ոչ մի հայ չի մնացել, եւ որտեղ հայկական մշակութային ժառանգության նույնիսկ ամենավերջին նշույլը սրբապղծվեց ու ոչնչացվեց վերջերս՝ 2005-ի դեկտեմբերին, ադրբեջանական պետության պաշտոնական քաղաքականության կիրառմամբ), Լեռնային Ղարաբաղը պահպանեց իր սեփականը եւ, որ բացառիկ է, թոթափեց հպատակեցման ու գաղութացման ստալինյան ժառանգությունը:

Թուրքիան՝ որպես համայն աշխարհում Ադրբեջանի հավատարմատար ու քաղաքական երեց ռահակից, պետք է հարգի Ղարաբաղի ընտրությունը՝ նրան ներգրավելով բոլոր ծրագրերում ու նախաձեռնություններում, որոնք դրվում են տարածաշրջանային հարցերի բանակցային սեղանին: Իհարկե, դիվանագիտական օրակարգը շարունակում է ներառել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են գաղթականների վերադարձը իրենց բնակավայրեր, հաղորդակցությունների վերաբացումը, ապառազմականացումն ու խաղաղապահությունը, տարածքային շտկումներն ու անվտանգության երաշխիքները: Սակայն սրանցից ոչ մեկը չի կարող իրագործվել՝ եւ չի իրագործվելու միակողմանիորեն կամ ի շահ լոկ մեկ կողմի: Փոխադարձությունը առանցքային նախադրյալ է յուրաքանչյուր կատեգորիայում, որից էլ բխում է, որ կողմերի միջեւ վերջնական համաձայնագիրը, ինչպես նաեւ հետեւող պայմանակարգը պետք է ընդգրկեն հավասարապես բոլորին՝ Կասպից ծովից մինչեւ Սեւ ծով: Օրինակ՝ երբ քննարկվում է գաղթականների եւ նրանց ժառանգների՝ կամավոր վերադառնալու երաշխավորված իրավունքը կամ կանոնավոր երթեւեկության վերագործարկումը, այսօրինակ դրույթների ու անվտանգության հարակից արձանագրությունների գործունեության շրջանակը պետք է ներառի Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը, Հայաստանը եւ Թուրքիան: Այս լույսի ներքո եւս՝ Ադրբեջան-Արցախ դիմակայության արդարացի ու տեւական լուծումն ածանցվում է թուրք-հայկական հարաբերությունից եւ դրա զարգացման հեռանկարից:

Անխուսափելի ինքնաբացահայտման ճանապարհին Թուրքիան, Հայաստանի հետ նրա ապագան եւ նրանց անմիջական հարեւանությունը միասին ձեւավորել են մոլորակի ամենազգայուն եւ սեյսմիկ կառուցվածքային գոտիներից մեկը: Նեոիմպերիալ շահերը եւ դրանք սպասարկող հում ուժն այլեւս չեն կարող կառավարել այդ գոտու հնարավոր տեղաշարժը: Ազնվությունը, արդարադատությունը եւ մի փոքր էլ պարկեշտությունը միգուցե ի զորու լինեն փրկելու այս օրը: Եվ մեր աշխարհը:

***Րաֆֆի Կ. Հովհաննիսյանը՝ Հայաստանի արտաքին գործերի առաջին նախարարը, այժմ ՀՀ Ազգային ժողովում ներկայացնում է ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցությունը:***